

## ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

### Ինչո՞ւ Թրամփ Կը Պաշտպանէ «Էրտողանի Մարդուն» Թեկնածուինը

Նախկին նախագահ Տամուլտ Թրամփ այս շաբաթ կոչ ըրաւ իր կողմնակիցներուն հանրապետականներու յայտարարեց, որ Ֆրանսայի կը վերահաստատէ իր լիակատար յանձնառութիւնը՝ ինչպէս երկրորդ հիման վրայ, այնպէս ալ որպէս Եւրոմիութեան խորհուրդի նախագահ եւ Միւնխենի խորհրդարանի նախագահ, Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման:

«Ֆրանսան կը շարունակէ աշխատիլ Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ՝ մարդասիրական հարցերուն մէջ յառաջընթաց արձանագրելու համար, եւ կը շարունակէ աջակցիլ սահմանազատման, տարածաշրջանի մեկուսացման վերջ դնելուն, ժառանգութեան պահպանման, երկու երկիրներու միջեւ խաղաղութեան պայմանագրի կնքման ու Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման ուղղուած աշխատանքներուն», ըստած է հաղորդագրութեան մէջ: «Այդ

Տոքթ. Օզ ժամօք է երկար տարիներու հեռատեսիլի բժշկական իր յայտագրի ընդմէջէն եւ ան միայն վերջերս է որ, մուտք գործեց քաղաքական ասպարէզ:

Այս գորակցութիւնը մեծ աղմուկ յառաջացուց նոյնիսկ Թրամփի կողմնակից՝ պահպանողական շրջանակներուն մօտ, որոնք Օզը կը նկատեն խնդրաշարժ անձնաւորութիւն մը իր անցեալի քաղաքական հայեացքներուն, թրքական հպատակութենէն չհրաժարելուն եւ Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Թայիպ Էրտողանի հետ ունեցած սերտ յարաբերութիւններուն եւ տնտեսական կապերուն պատճառաւ: Երբ Օզ յայտարարեց իր թեկնածութիւնը քաղաքական մեկնաբաններ մտահոգութիւն սկսան յայտնել, որ ընտրուելու պարագային Օզ պիտի դառնայ «Էրտողանի մարդը» օրէնսդիր վերին պալատէն ներս:

Թեւ Միացեալ Նահանգներու սահմանադրութիւնը չարգիւլեր որ երկքաղաքացիութիւն ունեցող անձ մը ընտրուի Ծերակոյտի անդամ, սակայն Օզի կապերը Թուրքիոյ իշխող կուսակցութեան եւ անոր ղեկավար Էրտողանի հետ, որ Ամերիկայի տարածքին ստեղծած է լրտեսական ցանց, իր քաղաքական հակառակորդները ճնշելու համար եւ կամ իր թիկնապահներուն կը հրահանգէ խոչտանգումի ենթակելու Ուոշինգթընի Թրքական դեսպանատան անջեւ բողոքի խաղաղ ցուցարարները, այդ պարագային անոր թրքահպատակ ըլլալը կը դառնայ կարեւոր ու մտահոգիչ պարագայ մը: Տոքթ. Օզի անուան հետ կապուած են նաեւ այլ սկանդալներ: Ան կը մեղադրուի, որ իր հեռատեսիլի հաղորդումներուն ընթացքին կը գովազդէ դեղամիջոցներ՝ որոնց օգտակարութեան վերաբերեալ կասկածներ գոյութիւն ունեցած են:

Այս բոլորով հանդերձ Տամուլտ Թրամփի նախընտրած է պաշտպանել Մեծ Օզին, երբ հրապարակի վրայ կան այլ շանթապետական թեկնածուներ, որոնք այդ կուսակցութեան գա-

## Հակասելով Լաւրովին՝ Ֆրանսա Կը Վերահաստատէ Իր Լիակատար Յանձնառութիւնը Միւնխենի Խորհրդարանին

Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարութիւնը ի պատասխան Միւնխենի Խորհրդարանի վերաբերեալ դիրքորոշման մասին հարցին յայտարարեց, որ Ֆրանսան կը վերահաստատէ իր լիակատար յանձնառութիւնը՝ ինչպէս երկրորդ հիման վրայ, այնպէս ալ որպէս Եւրոմիութեան խորհուրդի նախագահ եւ Միւնխենի խորհրդարանի նախագահ, Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման:

«Ֆրանսան կը շարունակէ աշխատիլ Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ՝ մարդասիրական հարցերուն մէջ յառաջընթաց արձանագրելու համար, եւ կը շարունակէ աջակցիլ սահմանազատման, տարածաշրջանի մեկուսացման վերջ դնելուն, ժառանգութեան պահպանման, երկու երկիրներու միջեւ խաղաղութեան պայմանագրի կնքման ու Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման ուղղուած աշխատանքներուն», ըստած է հաղորդագրութեան մէջ: «Այդ



Արարատ Միրզոյեան եւ Սերկէյ Լաւրով Մոսկուայի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին

նպատակով սոյն թուականի Փետրուար 4-ին հանրապետութեան նախագահի նախաձեռնութեամբ տեսակապի միջոցով հանդիպում կազմակերպուած է Հայաստանի վարչապետին, Ատրպէյճանի նախագահ-

հին եւ Եւրոպական խորհուրդի նախագահին հետ», կը յիշեցնէ Ֆրանսայի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը՝ նշելով, որ տու-

Շար.ը էջ 5

## ՀԱՍ Կը Զօրակցի Վրէժ Աղաճանեանին, Արա Նաճարեանին եւ Կրէյ Գրիգորեանին



ՀԱՍ-ի Կլէմտիլի ներկայացուցիչները՝ Վրէժ Աղաճանեանի հետ. Զախէն Գրիգորեան, Արա Նաճարեան, Կրէյ Գրիգորեան, Աւօ Մազմանեան եւ Ստեփան Յովակիմեան

ՄԴԿԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱՍ) իր գորակցութիւնը յայտնեց Յունիս 7-ին կայանալիք Կլէմտիլ քաղաքի տեղական ընտրութիւններու շարք մը թեկնածուներուն:

ՀԱՍ-ի ներկայացուցիչները հանդիպումներ ունեցելով ընտրութիւններուն մասնակցող թեկնածուներուն հետ ծանօթացան անոնց ապագայ ծրագրերուն եւ քաղաքի բարգաւաճման գծով հետապնդելիք նպատակներուն:

ՀԱՍ իր գորակցութիւնը կը յայտէ Քաղաքապետական Խորհուրդի ներկայիս անդամ՝ Վրէժ Աղաճանեանին, որ իր վերընտրութեամբ պիտի հետապնդէ քաղաքին կողմէ մատչելի բնակարաններու կառուցման գծով սկսած աշխատանքները, որոնց շնորհիւ յա-

ռաջիկայ տարիներուն հազարաւոր տարեց քաղաքացիներ պիտի կարողանան ստանալ յարմարաւէտ գիւնդով վարձու բնակարաններ:

Արա Նաճարեանի վերընտրութեամբ ՀԱՍ կը հաւատայ որ, անոր ունեցած երկարամեայ փորձառութիւնը՝ Քաղաքապետական Խորհուրդէն ներս, պիտի նպաստէ Կլէմտիլի ապագայ զարգացման ու բարգաւաճման:

Կլէմտիլի Քաղաքային Քարտուղարի կարեւոր պաշտօնին համար ՀԱՍ կը գորակցի Կրէյ Գրիգորեանի թեկնածութեան: Ան երկար տարիներ ծառայած է Կլէմտիլի Ուսումնական Խորհուրդէն ներս նպաստելով որպէսզի քաղաքի հանրային դպրոցները մնան ապահով

## Դեսպան Մակունցի Հանդիպումը Լոս Անճելըսի Կազմակերպութիւններուն Հետ



Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Լիլիթ Մակունց

Ուաշինկթընի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Լիլիթ Մակունց այցելեց Լոս Անճելըս, ուր հանդիպում ունեցաւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Երկուշաբթի, Ապրիլ 12-ին Կլէմտիլի ՀՀ հիւպատոսարանէն ներս տեղի ունեցած հանդիպումի ընթացքին դեսպան Մակունց տեղեկութիւններ փոխանցեց Ուաշինկթընի դեսպանատան վերջին ամիսներու ծառայած գործունէութեան մասին, որոնք կը միտին քաղաքական շրջանակներու մօտ Հայաստանի ու Արցախի ի նպաստ դիրքորոշում ապահովել եւ զարգացնելու երկու երկիրներուն միջեւ տնտեսական եւ այլ կապերը:

Շար.ը էջ 5

Շար.ը էջ 5

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Խաղաղութեան Օրակարգին Հակընդդէմ Գործողութիւնները Ընդդիմութեան Լրացուցիչ Արգումենտն ԵՄ

ՀԵՂԻՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ընդդիմութիւնն ու վերջինիս սատարողները հետեւողականօրէն փորձում են արժեքը կել ու «կեղծ օրակարգ» որակել իշխանութեան կողմից առաջ մղուող խաղաղութեան օրակարգը՝ փոխարէնը չառաջարկելով որեւէ ռեալ, եթէ կ'ուզէք՝ անկեղծ օրակարգ: Միակ օրակարգը, որով առաջնորդուած է ընդդիմութեան տիրող տակ հանդէս եկող ընդդիմութիւնը, եղել է եւ կայ իշխանափոխութիւնը, որին էլ ստորադասուած են մնացած բոլոր օրակարգերը՝ խաղաղութեան օրակարգը՝ այդ թւում եւս:

«Հայաստան» խմբակցութեան փաստաբան պատգամաւոր Արամ Վարդեանեանն, օրինակ, Ապրիլի 5-ին տեղի ունեցած հանրահաւաքում ասում էր. «Թող այլեւս երբեք պատերազմ չլինի: Բայց դրա այլընտրանքը թուրքի ու ատրպէյճանցու տակ կ'զբլ չէ»: Իսկ որպէս այլընտրանք ահա թէ ինչ էր առաջարկում. «Մենք չենք առաջարկում այլընտրանք՝ ապրել կամ մեռնել: Մենք առաջարկում ենք բոլորովին այլ, բացառապէս ապրելու ընտրութիւն՝ ապրել ոչ թէ նուաստացած, ինչպէս ուզում են իշխանութիւնները, այլ արժանապատօրէն, մեր Հայրենիքին տէր կանգնելով»: Հայրենիքին «տէր կանգնել» ու ապրելը, դատելով հանրահաւաքից յետոյ ընդդիմութեան կողմից իրականացուող քայլերից, Արցախի դրօշը ՀՀ սուվերեն տարածքի տարբեր հատուածներում տնկելն ու դա որպէս հայրենափրկութեան ու ապրելու յաղթարշաւ ներկայացնելն է փաստօրէն:

Աժ արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողով

վի անդամ, «Քաղաքացիական Պաշտպանութիւն» խմբակցութեան պատգամաւոր Անուշ Բեղլոյեանը civic.am-ի հետ զրոյցում կարծարձագանքեց խաղաղութեան օրակարգի մասին ընդդիմութեան մեկնաբանութիւններին. «Խաղաղութեան օրակարգի այլընտրանքը պատերազմի օրակարգն է, եւ դրանով երեւի սահմանափակուենք»: Իսկ ի՞նչ պէտք է անի կառավարութիւնն իր սահմանած օրակարգն առաջ տանելու համար: «ՀՀ ԱԳՆ-ն պատշաճ իրազեկում է հանրութեանն իր գործունէութեան մասին եւ հետեւողական է նման յայտարարութիւնները չէզոքացնելու առումով: ԱԳՆ-ն պատշաճ կատարում է իր աշխատանքն այդ ոլորտում», - նկատեց Բեղլոյեանը: Հարցին՝ այսուհանդերձ, այսպիսի ազդեցիկ հակաքարոզութեան պայմաններում կառավարութեանը կը յաջողուի՞ առաջ տանել խաղաղութեան օրակարգը, մեր զրուցակիցն արձագանքեց. «Արդէն քանիցս է կրկնուել, ես էլ կրկնեմ՝ մեր իշխանութիւնն անցած ընտրութիւններին հանդէս է եկել խաղաղութեան օրակարգով՝ որպէս նախընտրական ծրագրի հիմնական բաղադրիչ, եւ դրան ժողովրդի կողմից տրուել է պատասխան՝ ընտրութիւնների արդիւնքների միջոցով»:

«Ատրպէյճանը, որտեղ նոյն ատորիար ռեժիմն է, ինչպէս որ նախկինում ՀՀ-ում էր, մինչեւ չենթարկուի պատասխանատուութեան պատերազմի յանցագործութիւնների համար, այդ երկրի հետ շատ դժուար է լինելու խաղաղութեան պայմանագիր կնքելը», - Civic.am-ի հետ զրոյցում կարծիք յայտնեց Հեխինկեան քաղաքացիական ասամբլեայի վանաձորի գրասենեակի ղեկավար, իրաւապաշտպան Արթուր Սաքունցը: Նա նկատեց, որ կառավարութեան կողմից խաղաղութեան օրակարգի առաջ մղումը ամենակոշտ քննադատութեան է ենթարկուելու յատկապէս նախկին իշխանութեան կողմից, այն նոյն իշխանութեան, որը 20 տարով իր անգործութեան հետեւանքով ուշացրել է խաղաղութեան պայմանագրի կնքումը՝ միաժամանակ չպատրաստուելով պատերազմի: Այժմ էլ, փաստօրէն, երբ պատերազմն իր կործանարար հետեւանքներով ծնկել է ՀՀ-ի առջեւ, այդ նոյն՝ խաղաղութեան օրակարգը կնքելու ամէն կերպ փորձում են որակագրկել ներկայումս առաջ մղուող խաղաղութեան օրակարգը՝ իշխանութեանը մեղադրելով «թուրքի առաջ կ'զբլ խաղաղութիւն մուրալու մէջ»:

«Իրենք էլի հերթական անգամ բովանդակային կեղծիքի միջոցով փորձում են իրենց քաղաքական նպատակներին հասնել՝ հանրային այնպիսի կարծիք ձեւաւորել, որ մենք թոյլ ենք, անկարողունակ ենք, խեղճ ենք, տկար ենք... Ու այս անկարողունակութեան պատկերի վրայ փորձում են իրենց հրամայել որպէս այլընտրանք, ինչը դատապարտուած է, աւելին՝ ամբարձրուել է մէկ տարի առաջ տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքներով: Նոյնիսկ պատերազմում պարտութեան հանգամանքը գործօն չհանդիսացաւ, որ իրենք ռեինկարնացիայի ենթարկուեն: Բայց դրանից յետոյ աւելի խայտառակ բան տեղի ունեցաւ. հասարակութեանը պիտակաւորեցին ամենանուաստացուցիչ որակումներով՝ «ժեխ»-ից մինչեւ «անհայրենիք»: Հիմա էդ ո՞նց են յաւակնում էդ նոյն՝ իրենց կողմից նուաստացուած մարդկանց փրկի-

չը հանդիսանալ: Սա ի՞նչ արտուրդ է: Եւ երկրորդ՝ իրենք, լինելով ատորիտար կառավարման կողմը, այս իշխանութեանը փորձում են ներկայացնել այսպէս՝ իրենք մեզանից լաւը չեն: Իրենց կարծելով՝ եթէ ներկաները լաւը չեն, ապա իրենք էլի կարող են հետ գալ եւ զբաղուել պետութեան հարցերը լուծելով», - ասաց Սաքունցը:

Վերջինիս խօսքով՝ ընդդիմութեան բառապաշարը պատերազմից առաջ եւ պատերազմից յետոյ օրակարգի փոփոխութիւն չի կրել:

Պարզապէս պատերազմի ելքն ու խաղաղութեան օրակարգին հակընդդէմ գործողութիւններն ու յայտարարութիւնները ընդդիմութիւնը լրացուցիչ արգումենտ է օգտագործում՝ իր քաղաքական նպատակներին հասնելու համար: «Ես դա նոյնիսկ չէի համարի քաղաքական, քանի որ կայ ընդամէնը մէկ նպատակ՝ զրկուել են կոռուպցիոն մեխանիզմներին տիրապետելու հնարաւորութիւնից եւ ամէն գնով փորձում են վերականգնուել նախկին կարգով ինչպէս կուէր, քանի որ իրենք աշխատել, քրտնել-ստեղծել-ստեղծագործելու սովոր չեն, իրենք պարագիտներ են, որոնց նպատակը իշխանութեան գալն ու պետութեան ռեսուրսները վերստին կ'լանելն է, կոռուպցիայի հետեւանքով արդէն նուազած եկամուտները լրացնելը: Եւ հստակ համեմատութիւն կատա-

Հանգիստ Ծաղկածորում՝ Արցախում Ատրպէյճանական Զինուժի Յարձակումների Օրերին

Մի Պահանջք Քոչարեանից Աւելին, Քան Նա Կարող է, Աւելին՝ Քան Նա Ուզում է

ԷՄՍԱ ՊԱՐԻԷԼԵԱՆ

«Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» դաշինքները «Պաշտպանելով Արցախը՝ պաշտպանենք Հայաստանը» խորագրով հանրահաւաք անցկացրեցին Ապրիլի 5-ին: Այն Ապրիլի 6-ին Նիկոլ Փաշինեանի՝ Պրիւսել կատարելիք այցի նախօրէին կազմակերպուեց: Հանրահաւաքը բազմամարդ էր, էներգետիկայի առումով՝ նախորդներից տարբերում էր, բովանդակային առումով՝ նորութիւն չկար, հասարակութեան մօտ առկայ՝ «վճռական գործողութիւնների դիմելու» պահանջի առումով, առաջ՝ անորոշ էր:

Մի քանի օր համացանցային ակտիւ քննարկումների թեմա էր դարձել Ռոբերտ Քոչարեանի՝ հանրահաւաքին մասնակցել-չմասնակցելու հարցը: Անգամ համարձակ պնդումներ էին ներկայացուում, թէ Քոչարեանը կը գտնի որեւէ պատճառաբանութիւն, որպէսզի չմասնակցի Ապրիլի 5-ի հանրահաւաքին: Ռոբերտ Քոչարեանը չմասնակցեց հանրահաւաքին, բայց զարմանալի է, թէ ինչու էին մարդիկ կեդրոնացել նրա մասնակցութեան թեմային, եթէ շատ աւելի կարեւոր հանգամանք կար քննարկելու:

Այսպէս, Քոչարեանի վատաւոր լինելու մասին առաջին տեղեկատուութիւնը ստացուեց Մարտի 29-ին՝ ՀՀ 2-րդ նախագահի փաստաբանական խումբի տարածած տեղեկութիւնից: Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարանը (Շենգակիթի նստավայր) յետաձգեց ենթադրեալ կաշառքի գործով քննութիւնը: Այդ օրը քայտնի դարձաւ, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը չի կարողացել ներկայանալ, նրա պաշտպան Յովհաննէս Խուրդոյեանը դատարանին տեղեկացրեց, որ նա չի ներկայացել դատական նիստին՝ վատաւոր լինելու պատճառով: Պաշտպանը ներկայացրել էր նաեւ համապատասխան բժշկական տեղեկանքը եւ յայտնել, որ նախնական տուեալներով՝ բուժումը կը տեւի մօտ 10 օր:

Ապրիլի 5-ի հանրահաւաքի նախօրեակին արդէն մամուլում տեղեկութիւններ յայտնուեցին, թէ՛ «Քոչարեանը Ծաղկածորում դահուկ քշելիս վնասուածք է ստացել», որն, ի դէպ, չհերքուեց նրա գրասենեակի կողմից: Ապա, ըրջանառուեց վարկածը, որ նա հենց այդ պատճառով էլ չի կարողանալ մասնակցել ընդդիմութեան հանրահաւաքին:

Ապրիլի 4-ին յատուկութիւն մտքեց Քոչարեանի գրասենեակի համակարգող Բագրատ Միկոյեանը, որը «Sputnik Արմենիայի» հետ զրոյցում՝ մեկնաբանելով նրա վնասուածքի մասին ՁԼՄ-ներում տարածուած լուրը, յայտնեց, որ նախագահը վնասուածքը ստացել է մէկ շաբաթ առաջ: «Ոչ մի սենսացիոն բան չկայ, ցանկացած մարդ, որ ակտիւ սպորտով է զբաղւում, ժամանակ առ ժամանակ վնասուածքներ է ստանում: Նախագահ Քոչարեանն այժմ տնային պայմաններում ինտենսիւ բուժում է ստանում: Հանրահաւաքին կը մասնակցի նախագահը, թէ ոչ, կախուած կը լինի նրա ինքնազգացողութիւնից», - ասել էր Միկոյեանը:

Ինչո՞ւ են կարեւոր վերոնշեալ ամսաթուրերը...

Քոչարեանի գրասենեակի համակարգողի տրամադրած տեղեկատուութիւնից պարզ է դառնում, որ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը Մարտի վերջի օրերին, երբ Արցախում ատրպէյճանական զինուժը ներխուժել էր Փառուկա եւ Քարազուլուխ, իսկ յետոյ ակնյայտ դարձաւ, որ ռուս խաղաղապահների գործուն աջակցու-

չը հանդիսանալ: Սա ի՞նչ արտուրդ է: Եւ երկրորդ՝ իրենք, լինելով ատորիտար կառավարման կողմը, այս իշխանութեանը փորձում են ներկայացնել այսպէս՝ իրենք մեզանից լաւը չեն: Իրենց կարծելով՝ եթէ ներկաները լաւը չեն, ապա իրենք էլի կարող են հետ գալ եւ զբաղուել պետութեան հարցերը լուծելով», - ասաց Սաքունցը:

Վերջինիս խօսքով՝ ընդդիմութեան բառապաշարը պատերազմից առաջ եւ պատերազմից յետոյ օրակարգի փոփոխութիւն չի կրել:

Պարզապէս պատերազմի ելքն ու խաղաղութեան օրակարգին հակընդդէմ գործողութիւններն ու յայտարարութիւնները ընդդիմութիւնը լրացուցիչ արգումենտ է օգտագործում՝ իր քաղաքական նպատակներին հասնելու համար: «Ես դա նոյնիսկ չէի համարի քաղաքական, քանի որ կայ ընդամէնը մէկ նպատակ՝ զրկուել են կոռուպցիոն մեխանիզմներին տիրապետելու հնարաւորութիւնից եւ ամէն գնով փորձում են վերականգնուել նախկին կարգով ինչպէս կուէր, քանի որ իրենք աշխատել, քրտնել-ստեղծել-ստեղծագործելու սովոր չեն, իրենք պարագիտներ են, որոնց նպատակը իշխանութեան գալն ու պետութեան ռեսուրսները վերստին կ'լանելն է, կոռուպցիայի հետեւանքով արդէն նուազած եկամուտները լրացնելը: Եւ հստակ համեմատութիւն կատա-

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՄԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

Շաբ.ը էջ 6

ԼՈՒՐԵՐ

Նիկոլ Փաշինեանը, Սասուն Միքայելեանն Ու Ալեքսանտր Ա ըզումանեանը Մարտ 1-ի Գործով Արդարացուեցան



2008-ի մարտեան իրադարձութիւններէն 14 տարի անց նախկին ընդդիմադիր գործիչները արդարացուեցան. Վճռաբեկ Դատարանը բեկանեց վարչապետ Նիկոլ Փաշինեանի, նախկին ընդդիմադիր գործիչ, այժմ Երկրապահ Կամաւորական Միութեան ղեկավար Սասուն Միքայելեանի, 2008-ի մարտեան հաւաքներու գործուն մասնակից, այժմ սքանտինաւեան հինգ երկիրներու մէջ Հայաստանի ղեկավար Ալեքսանտր Արզումանեանի եւ աքթիվիստ Տիգրան Պաղտասարեանի դատավճիռները: Այս որոշումները բողոքարկման ենթակայ չեն:

Նախկին ընդդիմադիրներէն դատական նիստին ներկայ էր միայն առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի խմբակից Տիգրան Պաղտասարեանը: Տարիներ առաջ ան տուգանքի ենթարկուած էր մարտեան արիւնալի այդ օրերուն երեք ոստիկան ծեծելու համար, երկու ամիս անցուցած էր կալանքի տակ: Ըսաւ՝ յանցագործի պիտակով ապրած է մէկ տասնեակէ աւելի տարիներ, իսկ այսօր արդէն արդարացուեցաւ: Կը մտածէ պատասխանատուութեան կանչել իր դէմ ցուցմունք տուած ոստիկանները, գործը քննած քննիչը:

Քննուած չորս բողոքներէն միայն վարչապետ Փաշինեանինը դատարան բերած էր գլխաւոր դատախազը՝ հիմնուելով երկու ամիս առաջ Եւրոպական Դատարանին կայացուցած վճիռին վրայ, որով Սթրասպուրկի դատարանը արձանագրած էր 2008-ին նախագահի թեկնածու Լեւոն Տէր Պետրոսեանի աջակից, այն ժամանակ

«Հայկական Ժամանակ» օրաթերթի խմբագիր Փաշինեանի երկու հիմնարար՝ ազատութեան եւ անձնական անձեռնմխելիութեան, ինչպէս նաեւ խաղաղ հաւաքներ կատարելու իրաւունքները:

Դատախազ Ազատ Մարգարեան կ'ընդգծէ, որ անցած երեք տարուայ ընթացքին մարտեան դէպքերով բերուած 20 բողոքները Վճռաբեկը բեկանած է, հիմքին՝ Եւրոպատարանի եզրայանգումն է այն մասին, որ ընդդիմադիր գործիչները զանգուածային անկարգութիւններ չեն կազմակերպած եւ որ անոնց արարքներուն մէջ պատժելի գործողութիւններ չեն եղած:

«Եւրոպական Դատարանը, կարելի է ասել, սեռով սպիտակի վրայ նշել է, որ այդ տեղի ունեցած բախումներն ու անկարգութիւնները որեւէ ձեւով ընդդիմութեան առաջնորդների կողմից կազմակերպուած չեն եղել: Ինչ վերաբերում է Միասնիկեանի արձանի մօտ տեղի ունեցած դէպքերին, ապա դրանք եղել են Մարտի 1-ի առաւօտեան անձանց հրապարակից հանելու արդիւնքում եւ ոչ իրաւաչափ ուժ կիրառելու արդիւնքում, անձինք դիմել են փախուստի, հաւաքուելով արդէն Միասնիկեանի արձանի մօտ: Իսկ հետագայ բախումները որեւէ ձեւ կազմակերպուած չլինելու վերաբերեալ որեւէ տուեալ Եւրոպական Դատարանին ներկայացուած չի եղել, ինչպէս նախկինում բերուած բողոքների հետ կապուած, այնպէս էլ ներկայումս Եւրոպական Դատարանում քննուող շատ գործերով», ըսաւ դատախազը:

Պատերազմին Զոհուածներու Եղբայրները Եւ Որդիները Պիտի Ազատուին Պարտադիր Զինուորական Ծառայութենէն

Խորհրդարանը երկրորդ ընթացքում ընդունեց «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Հայկ Սարգսեանի հեղինակած նախագիծը, որուն համաձայն՝ պարտադիր զինուորական ծառայութենէն պիտի ազատուին մարտական գործողութիւններու ընթացքին գոհուած զինուորներուն եղբայրները եւ որդիները: Նախագիծը ներկայացուց հեղինակը, որուն խօսքով՝ առաջինէն երկրորդ ընթացքում որոշ փոփոխութիւններ կատարուած են, համաձայն որոնց՝ գոհուած զինուորներուն եղբայրները կամ որդիները ցանկութեան պարագային կրնան դիմում գրել ու մեկնել ծառայութեան:

«Այս փոփոխութիւնների նպատակը ընկերային է, մենք գոհ-

ուած զինուորների եղբայրներին ազատում ենք զինուորական ծառայութիւնից, որ ընտանիքի հոգսերը մեղմենք, աշխատեն ու լուծեն ընկերային խնդիրները, ու ընտանիքում յառաջացած հոգեբանական խնդիրները լուծեն», ըսաւ պատգամաւորը:

Նախագիծին կողմ քուէարկած է 68 պատգամաւոր: «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւնները որոշում կայացուցած են չմասնակցիլ Ազգային Ժողովի քառօրեայ նիստերուն:

2022-ի ամառնային զօրակոչին կը նախատեսուի, որ օրէնքի շահառու պիտի ըլլայ 10, ձմեռնային զօրակոչին՝ 17 քաղաքացի, 2023-ի ամառնային զօրակոչին՝ 11, ձմեռնայինին՝ 14 քաղաքացի, այսինքն՝ յառաջիկայ չորս զօրա-

Ընդդիմութիւնը Զուգորդուած Կ'աշխատի Ատրպէյճանի Զետ. Ալէն Սիմոնեան

Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան ԱԺ նիստին պատասխանեց «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւններու պատգամաւորներուն, ովքեր յայտարարեցին, որ խորհրդարանի նիստերուն պիտի չմասնակցին ու պիտի մեկնին Արցախ:

«Ուզում եմ մի հարց չդել ընդդիմութեան ներկայացուցիչներին, այն մարդկանց, ովքեր ձայն են տուել Ռոպերթ Քոչարեանին, Սերժ Սարգսեանին եւ գործողել այս մարդկանց այստեղ: Ես ուզում եմ հասկանալ՝ լաւ, բա էս մարդիկ ե՞րբ են աշխատելու: Էս մարդիկ ե՞րբ են իրենց ստացած աշխատավարձը արդարացնելու, ե՞րբ են իրենց վրայ պետութեան կողմից ծախսուած գումարները արդարացնելու: Այսինքն՝ օրէնսդրական նախաձեռնութիւնների քանակը, մատերի վրայ հաշուած օրէնսդրական նախաձեռնութիւններ, որոնք միտում են Ռոպերթ Քոչարեանի դատավարութեան վրայ ազդեցութիւն ունենալուն:

«Հանդիպումներ միջազգային գործընկերների հետ, ամենաշատն չհակերտաւոր հանդիպումը Ատրպէյճանի եւ Թուրքիայի հետ Հայաստանի ժողովրդավարութեան վերաբերեալ զեկոյցին դէմ քուէարկելն էր, դրանից յետոյ որեւէ հակառակ ու լուրջ հանդիպման մասնակցութիւն չի եղել: Առաջարկներ վարչապետի հետ Արցախի թեմայի շուրջ հանդիպում անցկացնելու եւ իրավիճակի հետ կապուած տեղեկութիւն ստանալու մասին: Ոչ, զալ այստեղ ու ասել՝ ամէն ինչ գաղտնի են պահում եւ խուսափել բոլոր տեսակի խօսակցութիւններից: Զուգորդուած աշխատանքատրպէյճական զինուած ուժերի հետ՝ յայտարարութիւն՝ սաղրանք սահմանին: Նիկոլ Փաշինեան-Վլադիմիր Փութին հանդիպում՝ յայտարարութիւն ու միջինիկ:

«Հէնց ամբողջը իրար հետ գուգորդուած է, սրանք գուգադի-



Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

պութիւններ չեն, եւ սրա պատասխանը դուք պէտք է տաք: Ձեզ թւում է ինչո՞ւ էին այստեղ բոլորն այսօրուայ հաւաքուած այդ յայտարարութիւնն անում ու դուրս գալիս, որպէսզի սեղմուի այն կոծակը, որն ապահովում է աշխատավարձի մոտեքերը պատգամաւորների հաշուին: Սա է մեր այսօրուայ ընդդիմութիւնը: Ես դիմում եմ այն մարդկանց, ովքեր ընտրել են մեր ընդդիմութեանը: Ես հասկանում եմ՝ էն ժամանակ կար այսպիսի խօսակցութիւն՝ Մոսկուայից զանգել են, յետոյ այնտեղից ասացին՝ մենք հաստատ դառնում ենք իշխանութիւն: Մէկ էլ ՀՀ քաղաքացին ասաց՝ ես եմ այստեղ որոշողը: Ոչ մի մայրաքաղաքում չի որոշուելու ՀՀ ճակատագիրը: Եւ ստացուեց այն, ինչ ստացուեց, բա լաւ, ինչի՞ մասնատմանը վայր չէք դնում, կարող էք դնել: Վստահ եմ, որ չէք կարող: Եթէ այստեղ գործունէութիւն չէք ծաւալում, ինչո՞ւ էք գալիս այստեղ, ինչո՞ւ էք աշխատավարձ ստանում, ինչո՞ւ են այդ գումարները ձեր սպասարկման համար դուրս գրուած, որ ձեր կայքերի համար նիւթեր ապահովէք: Գտէք ձեզ», ըսաւ Ալէն Սիմոնեանը:

Աղուան Յովսէփեանի Վերաբերեալ Քրեական Գործի քննութիւնը Աւարտած Է

Հայաստանի նախկին գլխաւոր դատախազ, Քննչական կոմիտէի նախկին նախագահ Աղուան Յովսէփեանի վերաբերեալ քրէական գործի նախաքննութիւնը աւարտած է, կը յայտնէ Հակափտածութիւն կոմիտէին՝ նշելով, որ վերջինս կը մեղադրուի ձեռնարկատիրական գործունէութեան ապօրինի մասնակցելու, առանձնապէս մեծ չափերով կաշառք ստանալու, դրամի լուսացման եւ այլ չարաշահումներու կատարման մէջ: Յովսէփեանի նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը:

Գործով անցնող «Տիգրան Մեծ» հրատարակչութեան գլխաւոր տնօրէն Վրէժ Մարկոսեանն ալ, ըստ Հակափտածութիւն կոմիտէին, կը մեղադրուի Աղուան Յովսէփեանի դրամամբ անհատուց օտարման եղանակով Վ. Ղ. -ին փաստացի պատկանող հողատարածքը վատնման եղանակով՝ նուիրատուութեան պայմանագրով 2017-ին Աղուան Յովսէփեանին որդիին անուամբ արձանագրելու համար: Անոր նկատմամբ որպէս խափանման մի-



Նախկին գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեան

ջոց ընտրուած է ստորագրութիւն չհեռանալու մասին: Աղուան Յովսէփեանի եւ Վրէժ Մարկոսեանի վերաբերեալ քննուած քրէական գործին նախաքննութիւնը աւարտած է: Գործը մեղադրական եզրակացութեամբ չանձնուած է դատախազին՝ զայն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդութեամբ:

կոչերու ընթացքին 52 հնարաւոր

շահառու կրնայ ըլլալ:

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստան Կը Վերահաստատէ Իր Յանձնառութիւնը՝ Ապահովելու Արցախի Ժողովուրդին՝ Ազատ, Անվտանգ Եւ Արժանապատիւ Կեանքի Իրաւունքը. ԱԳՆ

ՀՀ Արտաքին Գործերու Նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է Մարաղայի մէջ հայերու կոտորածի 30-րդ տարելիցին առիթով:

«30 տարի առաջ՝ 1992 թ. Ապրիլի 10-ին, Ատրպէյճանի զինուած ուժերի կողմից իրականացուեց Արցախի Մարտակերտի շրջանի Մարաղա աւանում խաղաղ բնակչութեան՝ իր դաժանութեամբ աննախադէպ կոտորածը, որի հետեւեանքով շուրջ 5000 բնակչութիւն ունեցող հայկական բնակավայրն ամբողջութեամբ հայաթափուեց:

Մարաղայում իրականացուած պատերազմական յանցագործութիւնները փաստագրուած են մարդու իրաւունքներով զբաղող միջազգային կազմակերպութիւնների, ներառեալ՝ Human Rights Watch եւ Amnesty International իրաւապաշտպան կազմակերպութիւնների զեկոյցներում, որոնք վկայում են, որ հայերի դէմ իրագործուած ոճրագործութիւնների հետեւեանքով 50 հոգի դաժանաբար սպանուել է, այդ թւում՝ 30 կին, իսկ 29 կին եւ 9 երեխայ պատանդ են վերցուել, որոնցից 19 հոգու ճակատագիրն առայսօր անյայտ է մնում:

Մարաղայի կոտորածը, որը դարձաւ Սոսիալիստական Կիրովապատում եւ Պաքու կազմակերպուած հայերի ջարդերի շարունակութիւնը, Ատրպէյճանի իշխանութիւնների կողմից հայերի նկատմամբ ատելութեան եւ ցեղային գոտեմտման քաղաքականութեան հերթական դրսեւորումն է:

## Հայաստանի Դեսպանը Վերադարձած Է Իսրայէլ



Դեսպան Արման Յակոբեան հաւատարմագրերը կը յանձնէ Իսրայէլի Գաբաթի Երկրային Դեսպանին

Աւելի քան մէկուկէս տարուայ ընդմիջումէ յետոյ Իսրայէլի մէջ Հայաստանի դեսպանը վերադարձած է Թել Աւիւ՝ իր հաւատարմագրերը յանձնելով նախագահ Եիցխակ Հերցոկին:

Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան հաղորդմամբ, Հերցոկը եւ դեսպան Արման Յակոբեանը գրուցած են երկկողմ յարաբերութիւններու, հայ եւ հրեայ ժողովուրդներու բազմադարեայ կապերու եւ ընդհանրութիւններու, Իսրայէլի մէջ բնակող հայ համայնքին մասին:

Յակոբեանը, որ կը տիրապե-

Ատրպէյճանի հայաշատ քաղաքներում եւ Լեռնային Ղարաբաղում հայերի կոտորածների կազմակերպիչները եւ իրականացնողների անպատեհ լիութիւնը, նրանց հերոսացումը եւ տարիներ ի վեր վարուող հայատեացութեան քաղաքականութիւնը հիմք դարձան նոր զանգուածային ոճրագործութիւնների իրագործման:

Ներկայումս Ատրպէյճանական զինուած ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղում հայ քաղաքացիական բնակչութեան շարունակական թիրախաւորումն ու մարդասիրական ճգնաժամ ստեղծելուն ուղղուած գործողութիւնները, ինչպէս նաեւ ս.թ. Մարտի 24-ից ՌԴ խաղաղապահ ուժերի պատասխանատուութեան դատի ներխուժումը, որի հետեւեանքով աւելի քան 400 անձ ստիպուած տեղահանուեց, վկայում են պաշտօնական Պաքու իրական նպատակի մասին՝ ամբողջական ցեղային գոտեմտման ենթակալ Արցախը:

Այսօր մենք յարգանքի տուրք ենք մատուցում Մարաղայի կոտորածների զոհերի յիշատակին: Հայաստանի Հանրապետութիւնը վերահաստատում է իր յանձնառութիւնը՝ ապահովելու Արցախի ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ, անվտանգ եւ արժանապատիւ կեանքի իրաւունքը, եւ ընդգծում միջազգային հանրութեան ջանքերի հրատապութիւնը՝ կանխելու Լեռնային Ղարաբաղի հայութեան գոյութեան անվտանգութեան համար սպառնալիքները», նշուած է յայտարարութեան մէջ:

տէ եբրայերէնին ու արաբերէնին, անցեալ տարուայ Դեկտեմբերին նշանակուած էր Իսրայէլի մէջ Հայաստանի դեսպան: Մօտ 30-ամեայ դիւանագիտական աշխատանքի ընթացքին եղած է Արտաքին Գործերու Նախարարութեան Մերձաւոր Արեւելքի, այնուհետեւ՝ Ամերիկայի Վարչութեան պետ, 2020-2021 թուականներուն Պրագիլի մէջ Հայաստանի դեսպանն էր:

Թէ պաշտօնական երեւանը ինչո՞ւ որոշեց նոր պատասխաններ ուղղել Իսրայէլ, Արտաքին Գործերու Նախարարութեան հնարաւոր չեղաւ պարզել:

## Փաշինեան Ներկայացուց Այն Սկզբունքային Հարցերը, Որոնք Պէտք Է Դառնան Ատրպէյճանի Հետ Բանակցութիւններու Առարկայ



Պրիւքսէի մէջ կայացած Փաշինեան-Միշէլ-Ալիեւ համդիպումի ընթացքին

Հայկական կողմին համար սկզբունքային նշանակութիւն ունին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի անվտանգութեան երաշխիքները, անոնց իրաւունքներու եւ ազատութիւններու պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ ԼՂ վերջնական կարգավիճակին ճշգրտումը. այս հարցերը ընդգրկուած են խաղաղութեան օրակարգին վերաբերեալ հայկական կողմի պատասխաններուն մէջ եւ պէտք է դառնան բանակցութիւններուն առարկայ:

Այս մասին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը կառավարութեան նիստի իր ելոյթին մէջ՝ անդրադառնալով Ապրիլ 6-ին Եւրոպական խորհուրդի նախագահ Շառլ Միշէլի միջնորդութեամբ Պրիւքսէի մէջ իր եւ Ատրպէյճանի նախագահին հանդիպման ընթացքին:

«Հանդիպման արդիւնքներում երկու հարցի վերաբերեալ կայացուել է որոշում: Առաջինը՝ երկու երկրների արտաքին գործերի նախարարներին յանձնարարուել է սկսել ապագայ խաղաղութեան պայմանագրի նախապատրաստական աշխատանքները եւ այս ուղղութեամբ ձեռնարկել բանակցութիւններ եւ շփումներ: Սա նշանակում է, որ խաղաղութեան պայմանագրի վերաբերեալ Հայաստանի եւ Ատրպէյճանի ներկայացրած սկզբունքները եւ հարցերը պէտք է ի մի բերուեն եւ բանակցութիւնների արդիւնքներով հասցեագրեն», ըսաւ Փաշինեան:

Փաշինեան յիշեցուց, որ, ի պատասխան Ատրպէյճանի առաջարկներուն, հայկական կողմը ընդգծած է, որ անոնց մէջ հայկական կողմին համար անընդունելի ոչինչ կայ: «Սակայն դրանք չեն ամբողջացնում խաղաղութեան օրակարգի հարցերը: Եւ մեզ համար սկզբունքային նշանակութիւն ունեն ԼՂ ժողովրդի անվտանգութեան երաշխիքները, նրանց իրաւունքների եւ ազատութիւնների պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ ԼՂ վերջնական կարգավիճակի ճշգրտումը: Այս հարցերը ընդգրկուած են խաղաղութեան օրակարգի վերաբերեալ մեր պատասխաններում եւ պէտք է դառնան բանակցութիւնների առարկայ», ըսաւ վարչապետը:

Ան ընդգծեց, որ հայկական կողմը, ինչպէս նախապէս, այնպէս ալ հիմա, այս գործընթացին մէջ հակա կը համարէ ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահութեան ներգրաւուածութիւնը, եւ պէտք է շարունակել աշխատիլ այդ ուղղութեամբ:

«Պրիւքսէի մէջ յաջորդ որոշումը, որը կայացուեց, մինչեւ Ապրիլի վերջ Հայաստան-Ատրպէյճան սահմանների սահմանագծման հարցերով երկկողմ յանձնաժողով ստեղծելու մասին էր: Այդ յանձնաժողովը կ'ունենայ կրկնակի մասնաթիւ՝ առաջինը բուն սահմանագծման աշխատանքներն են, երկրորդը՝ սահմանի երկայնքով անվտանգութեան եւ կայունութեան ապահովումը: Այս թեմայով քննարկումները, այդ թւում Ռուսաստանի Դաշնութեան միջնորդութեամբ, տեղի են ունենում շուրջ մէկ տարի: Եւ ի վերջոյ այդպիսի փոխհամաձայնութեան որոշման յանգեցինք: Գիտէք, որ ՀՀ տարածքներ կան, որոնք գտնուում են Ատրպէյճանի վերահսկողութեան ներքոյ, կան Ատրպէյճանի տարածքներ, որոնք Հայաստանի վերահսկողութեան ներքոյ են: Այս հարցերը պէտք է լուծուեն բանակցութիւնների արդիւնքներով, բնականաբար տէ իւրէ հիմնաւորուած արձանագրումների, իրաւական նշանակութիւն ունեցող փաստերի հիման վրայ», ըսաւ Փաշինեանը:

Ան աւելցուց, որ սահմանագծման եւ սահմանազատման աշխատանքներուն աջակցութիւն ցուցաբերելու պատրաստակամութիւն յայտնած է Ռուսաստանը, Եւրոմիութիւնը նոյնպէս աջակցելու պատրաստակամութիւն կը ցուցաբերէ, եւ այս ուղղութեամբ պէտք է յառաջ շարժիլ: «Մեր դիրքորոշումն այն է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տէ իւրէ սահման գոյութիւն ունի, եւ դա խորհրդային ժամանակներում գոյութիւն ունեցող սահմանագիծն է: Այս արձանագրմամբ սահմանագծման աշխատանքները պէտք է սկսել եւ փորձել լուծուածների հասնել՝ գոլգոթեմի միջոցներ ձեռնարկելով անվտանգութեան եւ կայունութեան ապահովման ուղղութեամբ», ըսաւ վարչապետը:

# Բարձր Արհեստագիտութեան NVIDIA ԸՆԿԵՐՈՒԹԻՆԸ ԳԻՏԱԿԵՏԱԳՕՏԱԿԱՆ ԿԵՂՐՈՆ ԿՐ ՅԻՄՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը շրջագայի NVIDIA-ի կեղրոնէն Գերս՝ 2019-ին Քալիֆորնիա կատարած այցի ընթացքին

Համաշխարհային բարձր արհեստագիտութեան առաջատարներէն NVIDIA ընկերութիւնը գիտահետազոտական կեղրոն կը հիմնէ Հայաստանի մէջ: Այս մասին ֆէյսպուքեան իր էջով գրած է ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեանը:

«2019 թուականին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած պատուիրակութիւնն այցելել էր NVIDIA ընկերութեան կեղրոնակայան՝ Սիլիքոնեան հովիտին մէջ: Ընկերութեան հիմնադիր եւ գործադիր տնօրէն ձեռնարկի հետ հանդիպման ընթացքին քննարկեցինք հնարաւոր համագործակցութիւնը NVIDIA-ի հետ: Այսօր ես ուրախ եմ տեղեկացնել, որ NVIDIA-ն գալիս է Հայաստան: Աշխարհի առաջատար արհեստագիտութեան հսկաներից մէկը, որն ունի 27 միլիարտ տոլար տարեկան շրջանառութիւն եւ աւել-

լի քան 20.000 աշխատակից ամբողջ աշխարհում, բացում է իր նոր գրասենեակի դռները Երեւանում: Հայաստանեան մասնաճիւղը ղեկավարելու է Ռեմ Լեպարտեանը՝ Omniverse-ի եւ սիմուլեացիոն արհեստագիտութիւնների ուղղութեամբ ընկերութեան փոխնախագահը:

1999-ին NVIDIA-ի GPU-ի գիւտը իսթանեց համակարգչային խաղերի շուկայի աճը եւ վերաիմաստաւորեց ժամանակակից համակարգչային ծրագրաւորումը:

Ընկերութեան աշխատանքը արագացում է հաշուարկների եւ արհեստական բանականութեան ոլորտում վերափոխում է փոխադրութիւնը, առողջապահութիւնը եւ արտադրութիւնը եւ իսթանում բազմաթիւ այլ ոլորտների զարգացումը:

NVIDIA, բարի գալուստ Հայաստան», գրած է Յակոբ Արշակեանը:

## Ինչո՞ւ Թրամփ Կը Պաշտպանէ

Շարունակուած էջ 1-էն

Պաշտպանութեան երկարամեայ կողմնակիցներն են, իսկ Տոքսթ. Օզ միայն վերջերս դարձած է Հանրապետական: Յետեւաբար, հարց կը յարաբարձուի թէ ինչո՞ւ համար նախկին նախագահի նախընտրութիւնը կեղրոնացած է Օզի վրայ:

Թրամփի նախագահութեան շրջանին անոր ունեցած սերտ կապերը Երտոդանիան հետ ու անոնց միջեւ հեռաձայնային յարաբարձուի խօսակցութիւնները ժամանակին իսկ հարցականի տակ առնուած էին Ամերիկեան մամուլին կողմէ: Շատերու կարծիքով, Պոլսոյ մէջ գտնուող Թրամփի անուան երկու աշտարակները, որոնք նախկին նախագահին կ'ապահովէն տարեկան մէկ միլիոն տոլար եկամուտ, կարելի էր ունեցած են անոր վարած թրքանապատ արտաքին

քաղաքականութեան մէջ: Թրամփի այս վերջին քայլը եւս կրնայ շարունակութիւնը ըլլալ այդ կասկածելի յարաբարձութեան եւ տնտեսական կապերուն:

Մեծ մասամբ Օզի թեկնածութիւնը մտահոգութիւն պետք է պատճառէ ոչ միայն Փենսիլվանիա նահանգի ընտրողներուն այլ եւ ամբողջ Ամերիկայի ժողովուրդին ու քաղաքական շրջանակներուն՝ անկախ հայեացքներու տարբերութեան: Ծերակոյտի աթոռին մատուցելով Մեծ մասամբ Օզ Թրամփոյ բռնապետի պիտի ապահովէ նոր լծակներ այս երկրէն Գերս, զանոնք օգտագործելու համար իր ներքին ու արտաքին հակառակորդներուն դէմ եւ շարունակելու իր զինուորական միջամտութիւնները այլ երկիրներէն Գերս:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

## ՀԱՆ Կը Զօրակցի Վրէժ Աղաճանեանին

Շարունակուած էջ 1-էն

եւ տան բարձրորակ կրթութիւն մեր երիտասարդութեան: Ան նաեւ բարեսիրական գործունէութիւն կը ծաւալէ Հայաստանէն ներս, Մեղրիի մէջ հիմնելով համակարգիչներու ուսուցման կեղրոն:

ՀԱՆ գորակցութիւն կը յայտնէ նաեւ Դոկտ. Արմինա Կարապետ-

եանի վերընտրութեան՝ Կլէնտէլի Համալսարանի Գոլտմէն Խորհուրդի անդամութեան, Շանթ Սահակեանին՝ Կլէնտէլի Միացեալ Ուսումնական Խորհուրդի կազմէն ներս վերընտրութեան:

ՀԱՆ կոչ կ'ուղղէ Կլէնտէլի բոլոր Հայ բնակիչներուն, որպէսզի Յունիս 7-ին ներկայանան քուէատուփ ու կատարեն իրենց քաղա-

# Մի՛ Շփոթէք Հանրային Տարածքը Ախոռի Հետ. Տիգրան Յակոբեան

Հայաստանի Հեռուստատեսութեան եւ Ռատիոյի Ազգային Յանձնաժողովի նախագահ Տիգրան Յակոբեան ֆէյսպուքեան իր էջով պարզաբանած է «5-րդ ալիք» հեռուստատեսութեան հանդէպ վարչական տոյժ կիրառելու ՀՌՅ-ի որոշումը եւ ներկայացուցած է, թէ ինչու այդ որոշման պատճառով մեծ աղմուկ սկսած է:

Ըստ Յակոբեանի՝ այդ որոշումը խեղաթիւրած է նոյնինքն ալիքին ղեկավարը իր ֆէյսպուքեան գրառումներով եւ հարցազրոյցներով, «մանիփուլեացիաներով ու կեղծիքներով»:

Տիգրան Յակոբեանը նշած է, որ այս է պատճառը, որ ստիպուած է եւս մէկ անգամ պարզաբանել որոշման պատճառն ու հիմքերը: Գրառման մէջ ան ըսած է. «Հեռուստատեսութիւնը տուգանուել է եթերով գրեհկաբանութիւն եւ հայհոյախօսութիւն տարածելու համար: Կիրակնօրեայ լրատուական վերլուծական հաղորդման ժամանակ պատասխին ցուցադրուել են բառեր, որոնց թուում են ԲՈԶ, ՉԱԹՒԱԽ, ԲՈԶԻ ՏՂԱՅ: Որոշման հիմքը Յանձնաժողովի կողմից ընդունուած կարգն է, որով սահմանուել էին «անչափահասների առողջութեան, մտաւոր եւ ֆիզիքական զարգացման, դաստիարակութեան վրայ հնարաւոր բացասական ազդեցութիւն ունեցող հաղորդումների չափորոշիչները»: Եւ այդ «կեղտոտ» բառերուն օգտագործումը եթերով խախտած է չափորոշիչներու քանի մը յօդուած: Խախտումներուն համար հեռուստատեսութիւնը տուգանուած է: Ամէն ինչ շատ պարզ է:

«Մնացած «պայթիւնները» ընդդիմադիր մամուլը ճնշելու, էրթիքայի եւ մանկապղծութեան վերաբերեալ զառանցանքները, «բա, ուրիշների մօտ ինչի էլք նկատում», մանկական արդարացումները, սպառնալիքները, թէ բա քիչ մնաց եւ այլն ուղղուած են անտեղեակների կամ մտաւոր ունակութիւնների հետ խնդիր ունեցողների համար:

«Կարող եմ ենթադրել, որ



ՀՌՅ-ի նախագահ Տիգրան Յակոբեան

ինչ-որ մարդիկ իրենց տանը կանանց եւ երեխաների ներկայութեամբ խնդիր չեն տեսնում օգտագործել այդ բառերը, եւ դա իրենց անձնական գործն է: Բայց Յանձնաժողովի անդամները, համապատասխան ստորաբաժանումները, մշտադիտարկողները, իրաւաբանները թոյլ չեն տալու Հանրային մուլթիմիալիքում օրինականացնել հայհոյանքը եւ վերածել այդ հանրային տարածքն ախոռի:

«Յաւուած եմ, որ հեռուստատելիքի ղեկավարը չի կարողանում ընկալել, որ ՀՌՅ նախագահը որոշումները միանձնեայ չի ընդունում, որոշումներ ընդունելու համար «վերեւների» հետ չի խորհրդակցում, այնտեղից հրահանգներ չի ստանում: Հասկանում եմ, որ ժամանակին Յանձնաժողովում աշխատելիս չի ունեցել ինքնուրոյն որոշումներ ընդունելու փորձ, համարձակութիւն: Բայց, կարծում եմ, մի քանի տարին պէտք է բաւարար լինէր տեսնելու եւ հասկանալու Յանձնաժողովի գործունէութեան արմատական փոփոխութիւնը:

Ինձ ապշեցնում է, որ եթերում հայհոյելու սրբաբան իրաւունքը պահանջում են, հաւանում են, քաջալերում են, պաշտպանում են իրենց «ազգային արժէքներ կրող» համարողներն ու կանայք»:

## Տրանս Կը Վերահաստատէ

Շարունակուած էջ 1-էն

եալ պահին աշխատանքային այցով Երեւան կը գտնուի ԵԱՀԿ Մինսքի Խմբակի Ֆրանսացի համանախագահ Պրիս Ռոքֆոյը:

Անցեալ շաբաթ Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրով հայաստանցի պաշտօնակից Արարատ Միրզոյեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ յայտարարած էր, որ Ֆրանսան ու Միացեալ Նահանգները հրաժարած են համագործակցել Ռուսաստանի հետ ԵԱՀԿ Մինսքի Խումբի ծիրէն ներս: Լաւրովի խօսքով՝ Արեւմուտքը վեր դասած է Ռուսաստանի հետ տարաձայնութիւնները զարաբաղեան խնդիրի կարգաւորումէն:

Հայաստանի արտաքին գործերու նախարարը մոսկովեան նոյն ասուլիսին պնդած էր, որ, չնայած դժուարին աշխարհաքաղաքական իրադրութեան, եռանախագահութեան ձեւաչափը վերջնականապէս իր ուժը չէ կորսնցու-

ցած: Միրզոյեանը նաեւ կրկնած էր Երեւանի դիրքորոշումը, թէ համանախագահութիւնը պէտք է աջակցի հայ-ատրպէյճանական խաղաղութեան պայմանագրի նախապատրաստման աշխատանքներուն:

Լաւրովի հետ հանդիպման ընթացքին Արարատ Միրզոյեան ներկայացուցած է Հայաստանի դիրքորոշումը՝ խաղաղութեան պայմանագրի շուրջ Ատրպէյճանի բանակցութիւններ սկսելու վերաբերեալ՝ այդ ծիրին մէջ ընդգծելով ԵԱՀԿ Մինսքի Խումբի համանախագահութեան եւ համանախագահ երկիրներու միջնորդական դերը: Ապրիլ 11-ին նախարար Միրզոյեան Երեւանի մէջ ընդունած էր ԵԱՀԿ Մինսքի Խումբի Ֆրանսացի համանախագահ Պրիս Ռոքֆոյը:

Ըստ հանդիպման չափորոշման մամուլի հաղորդագրութեան, կարելուած է ԵԱՀԿ Մինսքի Խումբի համանախագահութեան դերը՝ իր մասնաթիւ շրջանակներուն մէջ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացին մէջ:

քացիական պարտականութիւնը ընտրելով վերջիշեալ թեկնածունե-

րը՝ յօգուտ Կլէնտէլի զարգացման ու ժողովուրդի բարօրութեան:

### Կարելորդ Արցախահայուրեան Ապագան Է

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Համարեա նոյն օրերուն գուգադիպեցան Հայաստանի Արտաքին Գործոց Նախարար Արա-րատ Միրզոյեանի Անթալիոյ դիւանապետական խորհրդաժողովի մասնակցութիւնը եւ Ատրպէյճանին Արցախեան պատերազմի աւարտէն ետք վերջնական համաձայնութեան մը համար ներկայացուցած հինգ յօդուածանի առաջարկը:

Քննարկելով հինգ յօդուածները կարելի է համոզուիլ թէ Ատրպէյճանի առաջարկները ընդունելի սահմաններու մէջ են: Արդէն նման հաստատում մըն ալ կատարեց Արարատ Միրզոյեան, նշելով որ «մեծ հաշուով, մեզ համար անընդունելի ոչինչ չկայ»:

Այս պահուն կողմերու միջեւ կարեւորագոյն խոչընդոտը կը կազմէ արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի ճանաչումը: Պարզ է որ Ատրպէյճան իր երկրի հողային ամբողջականութիւնը շեշտելու մասին որեւէ ակնարկութիւն չունի Արցախի ինքնավարութեան: Ուրեմն, երբ նկատի կ'ունենանք որ 30 տարիէ աւելի երկար պատմութիւն մը ունեցող խնդրին կիզակէտն է այդ նիւթը, ուրեմն Հայաստան պարտաւոր է փոխադարձել արցախահայութեան ապագան երաշխաւորող պայմաններ առաջադրելով:

Վերահաստատենք այն համոզումը թէ համաշխարհային քաղաքականութեան մէջ յստակ չափանիշներ գոյութիւն չ'ունին: Չափանիշները կը ճշդունեն ուժի կիրարկման հիման վրայ:

Կիպրոսի հիւսիսային հատուածի անջատումը եւ անկախացումը երբեւիցէ տարբեր չէ Արցախի «տեֆաքթօ» հանրապետութեանէն: անցնող այս 30 տարիներու ընթացքին ապրեցանք նման բազմաթիւ փորձութիւններ: Ապղազիա եւ Հարաւային Օսէթիա, աւելի ուշ ալ Ուքրանիոյ Տոմպասի շրջանի Տոնեցկ եւ Լուզանցկ նահանգները միակողմանի որոշումով անկախու-

թիւն հռչակեցին եւ Ռուսիոյ Դաշնութիւնը իսկոյն ճանչցաւ այդ անկախութիւնը:

Նման երեւոյթներ նախապէս ապրուած էին նաեւ տարանջատուած Եռակուսովիոյ օրինակով: Հոն ալ դաշնակցութիւն մը գոյացուցած տարբեր ազգութիւններ խորհրդային Միութեան տարանջատումին գուգահեռ մի առ մի յայտարարած էին իրենց անկախութիւնը եւ անդամակցած ՄԱԿ-ին:

ՄԱԿ եւ համաշխարհային քաղաքականութիւնը իրարու հակասող մերձեցումներ ցուցաբերեց անկախացման բոլոր այս եղանակներուն դիմաց:

Այս պահուն, երբ հաւանական չի թուիր Արցախի իբրեւ անկախ պետութիւն ՄԱԿ-ի կողմէ ճանաչումը, պարտինք վերջիշեւ տարակարծութեան դեռ նոր արծարծուած օրերուն իշխամ Ալիեւի հօր՝ Հայտար Ալիեւի յայտարարութիւններուն, որ կը խոստանար ամենալայն հաս-կացողութեամբ ինքնավարութիւն շնորհել Արցախին:

Հայաստանին սպառնացող կարեւորագոյն վտանգն է մատուցել պարտութեան հոգեբանութեան: Ճիշդ է որ 44-օրեայ պատերազմը աւարտեցաւ Հայաստանի պարտութեամբ: Նշենք որ կողմերը այդ 44 օրերու ընթացքին ունեցան համարեա իրարու հաւասար մարդկային կորուստ: Պատերազմը աւարտեցաւ Եռուրի անկումով, ինչ որ խորհրդանշական իմաստ ունէր երկու կողմերու համար ալ: Փութին հազիւ այդ պահուն է, որ միջամտեց եւ պարտադրեց զինադադարը:

Talinn Grigor is Professor and Chair of the Art History Program in the Department of Art and Art History at the University of California, Davis. Her books include *Building Iran: Modernism, Architecture, and National Heritage Under the Pahlavi Monarchs* (2009), *Contemporary Iranian Art: From the Street to the Studio* (2014), and *The Persian Revival: The Imperialism of the Copy in Iranian and Parsi Architecture* (2021).

For more information contact NAASR at [hq@naasr.org](mailto:hq@naasr.org).

vious years without limiting the number of faithful attendees," the Patriarchate said.

"The Israeli Government on international level took in charge to secure the freedom of religious activities and performances without restraint. Therefore, the Armenian Patriarchate of Jerusalem hopes and expects that the Israeli Police would respect and follow its undertaking," the statement reads.

### Տ. Յովնան Ա. Արք. Տերտերեանի Ձատկական Պատգամը

«Փառք Հրաշափառ Յարութեան Քո Տէր»:

Յարութեան խորհուրդը չփորձենք ըմբռնել մարդկային մքտի ու տրամաբանութեան տարողութեամբ՝ ապարդիւն է: Զայն կարելի է զգալ ու ապրիլ միայն ու միայն հաւատքի գիտակցութեամբ: Հաւատքն է հետեւաբար բանալին, որուն միջոցով կը կարողանանք ներթափանցել յարութեան խորհուրդին մէջ եւ հասկնալ, թէ ինչպիսի ներգործութիւն ունեցած է այն աշխարհի մարդկութեան կեանքին մէջ, բայց մանաւանդ՝ մեր ազգի գաւակաց կեանքի բոլոր հանգրուաններուն:



Քրիստոսի յարութիւնն Աստուծոյ անսահման եւ անվերապահ սիրոյ առհաւատչեան է, Անոր անսուտ խոստումին հաւատարմութեամբ, որով լոյսը յաղթեց խաւարին, յոյսը՝ տրտմութեան, կեանքը՝ մահուն, բարին՝ չարին:

Քրիստոսի յարութիւնը մեր հաւատքի կեանքին մէջ ամենէն մեծ վկայութիւնն է, մեր դաւանած կրօնի վաւերութեան հիմնաքարը, անհաւատներու եւ թերահաւատներու համար Քրիստոսի աստուածութեան անհերքելի ապացոյցը, մեր հոգեւոր ինքնութեան խարխիւսը:

Այս օրերուն, երբ աշխարհն ալեկոծ է, շատեր չարախնդարով կը հարցնեն, թէ ո՞ւր է Յարութեամբ Փրկիչը: Ինչո՞ւ Աստուած չազատեց մեզ թագաւորակի ժահրէն, ինչո՞ւ չկանխեց Արցախեան վերջին պատերազմը, ինչո՞ւ չհարթեց Ռուսիոյ եւ Ուքրանիոյ տարածաշրջանները, որոնք հետեւանքով եղբայրասպան պատերազմը կրնայ երրորդ աշխարհամարտի վերածուիլ:

Արդար Յոբն ալ նման խռովալի տուայտանքներ ապրեցաւ, երբ կորսնցուց ամէն ինչ հակառակ այն փաստին, որ բարեպաշտ եւ աստուածասէր մարդ մըն էր: Յոբն ալ շատերու նման յուսախաբութեան պահեր ունեցաւ: Սակայն Աստուած մտիկ ընելով Յոբի մարդկային տրտունջները՝ պատասխանեց անոր «Քեզի արդարացնելու համար զի՞ս յանցաւոր պիտի հանես»: (ՅՈԲ 40:8) Ասոր վրայ Յոբը զղջաց եւ ապաշխարեց՝ ըսելով.

«Ես Քու մասիդ ականջով լսեմ էի, բայց հիմա աչքս կը տեսնէ Քեզի»: (ՅՈԲ 42:5)

Միամիտ չըլլանք Յոբի բարեկամներուն պէս, որոնք տրուեցան ձանձրալի եւ սին բացատրութիւններով անոր մխիթարելու գայթակղութեան: «Ինչու»ներուն պատասխանը ինչին եւ ինչեւին մէջ պիտի գտնենք, Անոր յեղած սուրբ արեան եւ կամաւոր պատարագումին: Ամենաբարին Աստուած մեղաւորին մահը չի ցանկար. պատահող չարիքներն ու արհաւիրքները արդիւնք չեն Անոր կամքին կամ հրահանգին, այլ՝ մեր ազատ կամեցողութեան: Յակոբոս առաքեալ շատ դիպուկ կ'ըսէ. «Չըլլայ թէ մէկը, որ փորձութեան մէջ է, ըսէ՝ «Աստուծո՞ւմ կը փորձուիմ» վասնզի Աստուած չար բաներով չի փորձուիր, ո՛չ ալ ինք մէկը կը փորձէ»: (ՅԱԿՈԲ 1:13)

Ուրեմն, մեր մարդկային ծանր հոգեվիճակէն ակամայ բխող, երբեմն ալ արդարացիօրէն դատապարտող հարցումներուն պատասխանը եւ ամէն տեսակ կասկածներուն փարատումը պիտի գտնենք Քրիստոսի մեզի հետ չարչարանա-

կից ըլլալու, մեր փրկութեան համար գոհաբերուելու եւ փառքով յարութիւն առնելու աստուածադիր խորհուրդին մէջ: Անոր համար է, որ Աւագ Շաբթոկայ ընթացքին «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութեամբ կը փառաւորենք եւ կը մեծացուցանենք Քրիստոսի մասնութիւնը, չարչարանքները, թաղումը եւ յարութիւնը:

Ինչպէս մեր նախնիք, այնպէս եւ մենք պարտինք ապրիլ մեր կեանքը յարութեան արշալոյսին ակնդէտ՝ հասկանալով, որ եթէ մեր կեանքի ընթացքին կան փորձութիւններ, ատոնք անցողիկ են: Յարութեան խորհուրդով պիտի ապրի ի մասնաւորի մեր ժողովուրդը ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, որպէսզի կարենայ ամոքել իր ցաւն ու տառապանքը: Մխիթարութիւնը Աստուծո՞ւմ կու գայ, երբ մեր տառապանքի, տրտմութեան եւ սուգի պահուն Յոբի պէս կը խոնարհինք Անոր մեծութեան առաջ, կը զղջանք եւ կ'ապաշխարենք: Այն ատեն է, որ յարուցեալ Աստուծոյ իրական տեսութեան կ'արժանանանք:

Այսօր մեր սուրբ եկեղեցին պատգամ կը չղէ իր գաւակներուն հոգեւոր կեանքը յարութեան խորհուրդով վերանորոգելու: Մեր սուրբ եկեղեցի կը յորդորէ մէկզի թողուլ չարախօսութիւնը, աւերիչ քննադատութիւնը, անիմաստ տրտունջը, սեփական պատասխանատուութիւնը ուրիշներու վրայ բարդելը: Մայր սուրբ եկեղեցին կ'ուսուցանէ մեր աստուածասիրութիւնը գործնական կերպով արտայայտել մէկզմէկու գորովագին սիրելով՝ այնպէս, ինչպէս Աստուած ինք կը սիրէ մեզի: Վստահ ենք, որ մեր հոգեւոր վերածնունդն ու ազգային հզօրացումը մեծապէս պայմանաւորուած է սուրբ եկեղեցւոյ այդ պատգամներու իրագործումով:

Յարութեան տօնը կ'իմաստաւորուի միայն այն ժամանակ, երբ մեր աշխարհասփիւռ ժողովուրդն ապրի ներողամտութեան ոգիով, մէկզմիւսի հանդէպ խոնարհումով, քրիստոնէական սիրով ու անվերապահ հաւատքով: Ինչպէ՞ս կրնանք աստուածասէր ըլլալ, եթէ չենք կրնար այս մէկը ընել: Ինչպէ՞ս պիտի կանգնինք Յարութեամբ Փրկիչի փառքի եւ զօրութեան առջեւ, եթէ չենք կրնար գերյարգութեան արժանացնել Աստուծոյ կողմէ մեր ազգին ընծայուած թանկագին պարգեւները՝ մեր հայրենիքը, Ս. Էջմիածինը, հայոց լեզուն, մշակոյթը:

2022 թուականը մեզի համար չափաքանց նշանակալի է, քանզի այս տարի կը տօնախմբենք թեմի հիմնադրման 95-ամեակը: Միաժամանակ տարին յայտարարած

### Ա. Յարութեան Մշտանորոգ Պատգամը

«Հոս չէ՛ ան, յարութի՛ւն առաւ» (Ղուկաս 24.6):

Վերոյիշեալ զգայացունց յայտարարութիւնն է որ կ'ամփոփէ Ա. Ձատկական խորհուրդն ու պատմութիւնը: Յիսուսի խաչելութեան յաջորդող առաջին Կիրակի առաւօտն էր երբ իւղաբեր կիներ եկած էին Յիսուսի մարմինը օծելու: Իրենք զիրենք մեծ անակնկալի մը դէմ յանդիման գտան: Յիսուսի գերեզմանին մուտքը փակող հակաջ քարը զլորուած էր: Բայց աւելին, գերեզմանը թափուր էր: Յիսուսի մարմինը հոն չէր: Ի տես այս արտակարգ պատահարին՝ մինչ անոնք ապշած իրարու կը նայէին, երկու լուսազգեստ մարդիկ իրենց քով կանգնած հետեւեալ յայտարարութիւնը կ'ընէին. «Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք: Հոս չէ՛ ան, յարութի՛ւն առաւ» (Ղուկ. 24. 5-6):

Այս յայտարարութեան մէջ կը խտանայ Ս. Յարութեան տօնին պատգամը: Պատմական եղելութիւնը այն է, որ Յիսուսի թշնամիները խաչեցին եւ սպաննեցին զինք: Իր բարեկամները խաչէն վար առնելով անոր անշնչացած մարմինը փոխ առնուած գերեզմանի մը մէջ դրին եւ հակաջ քար մը զլորեցին գերեզմանին դուռը: Բայց Աստուած խորտակեց գերեզմանին կապանքը եւ յարուց Տէր Յիսուս Քրիստոսը՝ իբր յարուցեալներուն առաջին պտուղը:

Յիսուս Քրիստոսի յարութեան դէպքը հիմնաքարն է քրիստոնէական հաւատքին: «Քրիստոս յարեալ ի մեռելոց» յայտարարութիւնը ունի մշտանորոգ պատգամ մը, որ կը շեփորէ հետեւեալ երկու կարեւոր իրողութիւնները. -

Առաջին, Յիսուս Քրիստոսի յարութիւնը կը հաստատէ յաւիտենական կեանքի անմեռ յոյսը: «Հոս չէ՛ ան, յարութիւն առաւ» յայտարարութիւնը կու գայ վկայելու անդենական կեանքի երաշխիքը, կու գայ հաստատելու Քրիստոսի խոստումը - «Ես եմ յարութիւնը եւ կեանքը, ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի» (Յովհաննէս 11. 25):

Այս կը նշանակէ թէ Գողգոթայէն ու մութ գերեզմանէն անդին կայ հրաշափառ յարութիւն: Աւագ Ուրբաթին կը յաջորդէ Կիրակի օրուան հրաշալի առաւօտը: Մահը վերջակէտ չէ, այլ սոսկ ստորակէտ մը աւելի փառաւոր արարի մը, որ անվերջ ու յաւիտենական է:

Երկրորդ. Յիսուս Քրիստոսի յարութիւնը ոչ միայն անդենական կեանքի մը յոյսը կը ներշնչէ, այլ նաեւ ամէնօրեայ յաղթական կեանք մը ապրելու երաշխիք կ'ընծայէ: Աւելի քան քսան դարերերու ընթացքին բոլոր ճշմարիտ քրիստոնէաներուն վկայութիւնը յար եւ նման եղած է Պողոս Առաքեալի զօրեղ վկայութեան. - «Գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Ա. Կորն. 15. 57):

Քրիստոսի յարութիւնը հզօր ներգործութիւն ունեցաւ իր աշակերտներուն եւ հետեւորդներուն կեանքին մէջ: Քրիստոս այնչափ իրական դարձաւ իրենց կեանքին մէջ որչափ իրենց շնջած օղբ իրենց թոքերուն համար: Ո՛չ մէկ բան կրնար բաժնել զիրենք յարուցեալ Քրիստոսի հանդէպ ունեցած իրենց հաւատքէն եւ սէրէն. ո՛չ



հալածանքը, ո՛չ չարչարանքը եւ ո՛չ իսկ մահը:

Յիսուս Քրիստոսի յարութիւնը մեր մէջ կ'արմատացնէ այն հաւատքը որ կարգ մը աստուածատուր սկզբունքներ որչափ ալ անտեսուին, անարգուին, կոխկրտուին եւ թաղուին՝ ի սպառ չեն կորսուիր, այլ ի վերջոյ կը յաղթանակեն: Թող խաւարամիտ, նենգամիտ եւ անիրաւ մարդիկ ուրանան, հալածեն եւ թաղեն լոյսը, ճշմարտութիւնը, արդարութիւնն ու սէրը, բայց, վաղ թէ ուշ, այս յաւիտենական իրականութիւնները պիտի յաղթանակեն: Թող կեղծաւոր, անգութ եւ անիրաւ փարիսեցիները, քահանայապետերն ու կուսակալները զրպարտեն, հալածեն, խաչեն եւ թաղեն Տէր Յիսուսը, բայց Աստուած մէկզի պիտի զլորէ գերեզմանաքարը ու պիտի յարուցանէ զԱյն:

Այս օրերուն Ուքրանիայի ժողովուրդը ահաւոր վիճակի մը մատնուած է: Ռուսիոյ բռնակալ նախագահը կը փորձէ Ռուսիոյ հպատակ դարձնել իրեն դրացի Ուքրանիոյ Հանրապետութիւնը: Ան լծուած է անինչ կոտորածի ու կործանումի արշալի մը:

Ամբողջ երկիր մը, ներառեալ իր կէս միլիոն հայկական գաղութին, ենթարկուած է աննկարագրելի բարբարոսութեան մը: Հազարաւոր մարդիկ զոհ դարձած են ումբակոծումներու, միլիոնաւոր մարդիկ մեծ ու պզտիկ գաղթական դարձած են, քաղաքներ ու կառույցներ փլատակ դարձած են:

Անկասկած պիտի գայ այն օրը երբ կեանքի խաւարած «գիշեր»էն յետոյ պիտի ծագի խաղաղութեան արեգակը: Մինչ այդ, սակայն, որպէս քրիստոնէաներ պէտք է մեր աղօթքներով եւ մեր նիւթական նուէրներով օգնութեան ձեռք կարկառեցնենք Ուքրանացի ժողովուրդին եւ մեր գաղթական հայ եղբայրներուն եւ քույրերուն:

Կը հաստատենք որ արդարութիւնն ու ճշմարտութիւնը պիտի յաղթանակեն: Կը հաւատանք նաեւ որ հզօր Աստուած իր գահուն վրայ նստած կը շարունակէ գահակալել, եւ պիտի չ'արտօնէ որ մեղաւոր մարդիկ ի սպառ յաղթանակեն: Վերջին խօսքը Յարութեամբ եւ Յաղթական Տէրոջն է: Անոնք որոնք իրն են կրնան հաւատքով եւ յոյսով ապրիլ եւ յաղթականօրէն գոչել՝

«Քրիստոս յարեալ ի մեռելոց. Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:»

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ  
Գործադիր Տնօրէն, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի

ենք որպէս «Հայ Քրիստոնէայ Ընտանիքի» տարի: Այս գոյգ կա-

րեւոր իրադարձութիւնները կը պարտաւորեցնեն մեզի ոգեկոչել

# «Ամեն Ինչ Կարելի Է Վաճառել Ամերիկայում: Ամեն Ապրանք Իր Յաճախորդն Ունի»

44-օրեայ պատերազմից յետոյ Նշան եւ Լիլիթ Օտապաշեանները որոշել են մի փոքրիկ «Ամազոն» ստեղծել, հայկական արտադրանքն աշխարհին ճանաչելի դարձնել:

Հայկական արտադրանքը սփիւռքում եւ ամերիկեան սպառողին ճանաչելի դարձնելու նպատակով 2022 թվականի Ապրիլի 10-ին Լոս Անճելոսում տեղի կ'ունենայ առաջին «Ձատիկ» փառատօնը: Այս մասին «Առաւօտ» օրաթերթի հետ զրոյցում ասաց փառատօնի կազմակերպիչ Նշան Օտապաշեանը, ով տիկնոջ՝ Լիլիթ Օտապաշեանի հետ Buy Armenian-ի հիմնադիրներն են: Buy Armenian առցանց հարթակ է, որտեղ վաճառում են հայ արտադրողների ապրանքները: Այն ստեղծուել է ԱՄՆ-ում 44-օրեայ պատերազմից յետոյ: Լիլիթն ասում է՝ գաղափարը ծնուել է հայրենիքի նկատմամբ պարտքի զգացումից, այն է՝ իւրաքանչիւր հայ մի բան պէտք է անի, որպէսզի Հայաստանը գարգանայ, հօրանայ, տնտեսութիւնը ոտքի կանգնի

ընդլայնման, նոր հնարաւորութիւնների եւ նոր շուկաների բացայայտման համար:

Հարցրինք՝ ամերիկեան շուկան որքանով է հետաքրքրուած հայկական արտադրանքով, արդեօք հայ գործարարները, որոնց արտադրական ծաւալներն այդքան էլ մեծ չեն կարող են բաւարարել այդ հսկայական շուկայի պահանջարկը:

«Ամէն ինչ կարելի է վաճառել Ամերիկայում: Ամէն ապրանք իր յաճախորդն ունի: Շուկան շատ մեծ է, արտադրանքի համեմատ յաճախորդին կարող ենք գտնել», - ասում է Նշան Օտապաշեանը: Լիլիթն էլ յաւելում. «Ամերիկեան շուկան շատ-շատ մեծ է՝ փոքրից մինչեւ մեծ ծաւալներ, արտադրութեան համեմատ շուկայ կը գտնենք մենք: Երբ որ Հայաստանի արտադրողը սկսի փող աշխատել, գումար վաստակել, կարող է իր պիզնեսը մեծացնել, զարգացնել եւ ի վերջոյ կարող է դառնալ ամենամեծ առեւտրի կեդրոններին ապ-



չինական Թայլանդի, Սրի Լան արտադրողները մարքեթինգի վրայ շատ պէտք է աշխատեն. «Ճիշտ է վերջին մի քանի տարիներին Հայաստանում մարքեթինգը զարգացել է, բայց ընդհանուր առմամբ այդ ուղղութեամբ դեռ շատ պէտք է աշխատեն: Եթէ օտարին հարցնես՝ ինչ է հայկական արտադրանքը, ինչ որակ ունի եւ այլ, չգիտեն: Անգամ չգիտեն՝ Հայաստանն ինչ երկիր է: Շատ մեծ շեշտադրում պէտք է արուի մարքեթինգի վրայ, որպէսզի օտարները տեղեակ լինեն: Ես կարծում եմ, որ սա աւելի շատ Հայաստանի կառավարութեան գործն է, քանի որ դա մեծ գումարների հետ է կապուած: Պէտք է գովազդեն Հայաստանը, գովազդեն հայկական արտադրանքը»:

աշխատել Հայաստանի որակեալ ապրանքների հետ, որպէսզի առաջին տպաւորութիւնը շատ լաւը լինի»:

Լիլիթն ասում է, որ հայ արտադրողները ապրանքի փաթեթաւորման, յաճախորդի սպասարկման հարցերին նոյնպէս պէտք է ուշադրութիւն դարձնեն, ինչը եւս նրանց թոյլ կողմերից է. «Պէտք է բաւականին աշխատանք տանել եւ որակը լաւացնել: Զարգացում ապրել են, բայց դեռեւս շատ ապրանքների փաթեթաւորումը ամերիկեան շուկայի մակարդակին չէ»:

Նշանը գտնում է, որ հայ արտադրողները մարքեթինգի վրայ շատ պէտք է աշխատեն. «Ճիշտ է վերջին մի քանի տարիներին Հայաստանում մարքեթինգը զարգացել է, բայց ընդհանուր առմամբ այդ ուղղութեամբ դեռ շատ պէտք է աշխատեն: Եթէ օտարին հարցնես՝ ինչ է հայկական արտադրանքը, ինչ որակ ունի եւ այլ, չգիտեն: Անգամ չգիտեն՝ Հայաստանն ինչ երկիր է: Շատ մեծ շեշտադրում պէտք է արուի մարքեթինգի վրայ, որպէսզի օտարները տեղեակ լինեն: Ես կարծում եմ, որ սա աւելի շատ Հայաստանի կառավարութեան գործն է, քանի որ դա մեծ գումարների հետ է կապուած: Պէտք է գովազդեն Հայաստանը, գովազդեն հայկական արտադրանքը»:

Ամուսիններն ասում են, որ Buy Armenian-ի նպատակներից մէկն էլ մի փոքր հայկական «Ամազոն» ստեղծելն է: Սակայն, ինչպէս նրանք են նշում, ապրանքները ԱՄՆ եւ այլ երկրներ հասցնելու լոճիստիկ խնդիրներ կան:

Նշանի խօսքով, այդ հարցում ամենամեծ խոչընդոտը փոխադրումներն են, որի պատճառով էլ ապրանքների առաքման աշխարհագրութիւնն ու պիզնեսի ծաւալները չեն կարողանում շատ մեծացնել. «Փոխադրման ծախսերը բարձր են, բայց մենք ամէն ինչ պէտք է փորձենք, որ յաջողենք այս ծրագիրը, որովհետեւ Հայաստանի ապրանքը պէտք է ներկայացուի սփիւռքում եւ տարբեր երկրներում, մարդիկ պէտք է օգտուեն, եւ հայ արտադրողը ճանաչելի դառնայ»:

Դրա համար տարբերակներ ենք փնտրում, որ աւելի յարմար ձեւով ապրանքները հասցնենք գնորդներին»:

ԼՈՒՍԻՆԷ ԲՈՒԴԱՂԵԱՆ  
«ԱՌԱԻՕՏ» ՕՐԱԹԵՐԹ



«Որպէսզի սփիւռքում քաջալերէինք, որ հայկականը գնեն՝ դրանով օգնելով մեր հայ արտադրողներին, ստեղծեցինք Buy Armenian հարթակը: Մէկ տարի ֆէյսպուքի խմբով ենք սկսել, բայց որպէսզի այդ գործը կայանար, աւելի արդիւնաւէտ ու շարունակական լինէր, պէտք է դառնար պիզնես: Հիմա արդէն ունենք 50 հազար անդամ: Պէտք է, ոչ թէ պոփուտեք թուրքական ապրանքը, այլ քաջալերենք հայկական արտադրանքը», - ասում է Լիլիթը:

րանք մատակարարող: Սկզբում կարելի է քննել սկսել. Նրան համեմատ շուկայ գտնելով կը զարգացնենք եւ առաջ կը գնանք եւ նրանց առջեւ աւելի մեծ շուկաներ ու դռներ կը բացուեն»:

Նշան Օտապաշեանը մասնագիտութեամբ բժիշկ է, ատամի նեարդի նեղ մասնագէտ, նաեւ գործարար: Նա այն գործարարներից մէկն է, որը դարձել է Մանթաշեանց գործարարների միութեան Լոս Անճելոսի մասնաճիւղի անդամ: Մասնաճիւղը վերջերս է բացուել: Արդէն ունի 30 անդամ:

Buy Armenian-ի տաղաւարում կը ներկայացուեն 50-ից աւելի հայ արտադրողների ապրանքներ, ծառայութիւններ, որոնք ուղարկուել են Հայաստանից՝ յատուկ այս միջոցառման համար:

Նշան Օտապաշեանը համոզուած է, որ նման միջոցառումները հայաստանեան արտադրողների համար լուրջ խթան են տնտեսական համագործակցութեան յետագայ

Կը ցուցադրուի սնունդ, հագուստ, խմիչք, չրեկէն շոքոլադ, մոմեր, սերամիքա՝ հայկական զարդանախշերով, ոսկեայ, արծաթեայ զարդեր, քոզմետիկ միջոցներ, օճառներ: Փառատօնում ներկայացուած կը լինեն նաեւ Արցախի կարպետները:

Ինչպէս ամուսիններն են ասում՝ փառատօնից ստացուած հասուցի մի մասը պէտք է ուղղուի 44-օրեայ պատերազմում զոհուածների եւ վիրաւորում ստացած զինծառայողներին ընտանիքներին:

Նշան Օտապաշեանը համոզուած է, որ նման միջոցառումները հայաստանեան արտադրողների համար լուրջ խթան են տնտեսական համագործակցութեան յետագայ



## Շնորհակալական

Վերջերս նշուեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան երկարամեայ նուիրեալ անդամներէն Ընկ. Յարութիւն Պոյամեանի ծննդեան 80-ամեակը:

Փաստօրէնալի ՀԿԲՄ-ի կեդրոնէն ներս տեղի ունեցած ճոխ տօնակատարութեան ներկայ էին ընտանիքի անդամներ, ազգականներ, բարեկամներու ու ընկեր-ընկերուհիներ:

Այս առթիւ կատարուած բոլոր դրամական նուէրները՝ մօտ 15 հազար Տոլար, Տէր Եւ Տիկին Յարութիւն եւ Լուսին Պոյամեաններ փոխանցեցին Հայկական Կրթական Բարեփոխական Միութեան՝ յատկացնելու համար կազմակերպութեան ծրագիրներուն:

Կը շնորհաւորենք Ընկ. Պոյամեանի տարեդարձը՝ մաղթելով իրեն երջանկութիւն ու առողջութիւն եւ շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր նուիրատուներուն:

«ՄԱՍԻՍ»

# Ապրիլ 24-ին Ընդառաջ Մեծ Եղեռնի Արժեւորման Դեպքերով (Հայրիկիս Մի Նամակը՝ Ուղղուած Առ Որ Անկ է)

## ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Անցեալ դարի 60-ականների նախաշեմին, Յուլիսեան տապ օրերից մի օր, երբ ես ծիրանի ծառի վրայ գերհասած (կարծեմ նոր բառ է, - Յեն. Ա.) շալախ որակի ծիրան էի հաւաքում, բակում յայտնուեց մի անուանական գոյգ: Հայրիկս անմիջապէս գնաց ընդառաջ ու հրաւիրեց յարմարաւետ տեղաւորուել հսկայ ծառի շուքի տակ դրուած թախտի (առանց հենակի փայտէ բազմոց) վրայ:

- Հենրիկ տղաս, իջիր ներքեւ, բաւարար է հաւաքածդ ծիրանը, հիմա Մարիետան էլ մի սուրճ կպատրաստի մեր հիւրերի համար, կ'ասենք, կը խօսենք,- ասաց հայրիկս:

Իջայ ծառից առանց հիւրերին մօտենալու, այգու ծորակի տակ ծիրանը մի լաւ լուալուց յետոյ, լի թասը ձեռքիս մօտեցայ հիւրերին:

- Արշակ, ծանօթացիր, Հենրիկն է, փոքր տղաս, կոնսերվատորիայում է սովորում: Կարծեմ քեզ ասել եմ այդ մասին:

- Այո, այո~, գիտեմ, գիտեմ աւելին- իմացայ որ Սեպտեմբերին էլ Լեհաստան է գնալու «Վարչաւեան աշուն» երաժշտական ֆեստիվալին (փառատօն) մասնակցելու:

Մէկ վայրկեան շուարումի մատնուեցիմք ամենքս: Այդ մասին քչերը գիտէին լռութիւնը խախտեց ինքը՝ Արշակ (ամուսնը փոխուած է, ժառանգները ողջ են եւ յաճախ են երեւում դիմատետրում) կոչեցեալը:

- Եդ ինչի՞ գարմացաք, ես՝ իմ աշխատանքի բերումով շատ բան գիտեմ-, դէ լաւ~, հեն ա, Մարիետան սուրճը ձեռքիմ մեզ է մօտենում:

Իբր բան չեղածի պէս «մոռացուեց» միջադէպը: Ես անմիջապէս հասկացայ թէ ում հետ գործ ունենք:

Հիւրերի գնալուց յետոյ, հրաման արձակելու պէս՝ հայրիկս ասաց.- խնդրում եմ Արշակի ներկայութեամբ քաղաքականութեան մասին երբեք խօսք չբանալ:

Որքան մօտենում էր 1965 թուականը՝ այնքան աւելի յաճախ էին դառնում Արշակի այցելութիւնները: Նրան յաջողուեց ծանօթանալ մեր բոլոր հարեւանների հետ, որոնք նկատելի արգահատանքով էին արտայայտուում նրա մասին: Ինքս էլ՝ առաջին իսկ վայրկեանից չսիրեցի նրան:

Ապրիլ 24-ի նախօրէին Արշակը մեր հարեւաններին յորդորել է մասնակից չդառնալ համաժողովրդական ցոյցին եւ այլանդակ որակումով փնովել Դաշնակցութեանը, որ իբր թէ նրանց սարքած գործն է եւ, ըստ իրեն, վտանգաւոր է մասնակից դառնալը նման զանգուածային ցոյցին, որովհետեւ կառավարութիւնը խստագոյն միջոցներ է ձեռնարկելու ցուցարարների նկատմամբ:

Ապրիլ 24-ից յետոյ Արշակի ոտքը վերջնականապէս կտրուեց թէ մեր տնից եւ թէ մեր թաղից: Սակայն մենք ջերմ յարաբերութիւններ ունեցինք նրա աղջկայ ընտանիքի հետ եւ գնալ-գալը անպակաս էր, որոնց ընթացքին մշտապէս բացակայ էր Արշակը: Մի գաղտնիք կար, որ ինձ մշտապէս տանջում էր: Ի՞նչ էր պատահել հայրիկիս եւ Արշակի յարաբերութիւնների մէջ, որ այդպէս լռութեան մատնուեց KGB-ի գործակալի անունը մեր ընտանիքում:

Գաղտնիքը բացուեց հայրիկիս մահից (1988թ.) յետոյ: 2004 թուականին հանդիսաւոր պայմաններում Երեւանում նշուելու էր նշանաւոր պատմաբան, հայագէտ, մատենագէտ, գիտնական Յակոբ Անասեանի ծննդեան 100-ամեակը: Այդ առնչութեամբ, հրատարակութեան էի պատրաստում նրա Նամակների Ընտրանիք: Եւ, ի՞նչ էք կարծում, ի՞նչ գտայ դրանց մէջ,- հայրիկիս նամակը՝ ուղղուած մեր «հերոս» Արշակին: Նամակի բովանդակութիւնը կարդալուց յետոյ, առաջին վայրկեանին ընթերցողին կարող է թուալ թէ դա զուտ անձնական բնոյթ է կրում, սակայն բնաւ էլ այդպէս չէ: Նամակում երկու գործող անձ են, մէկը՝ իշխանութիւններին ծախուած KGB-ի գործակալ, իսկ միւսը՝ ճշմարիտ հայրենասէր, Յեղասպանութեան ճանաչման համար պայքարող հաւատաւոր զինուոր:

Այժմ, հայրիկիս՝ այս օրերի համար չափազանց համահունչ նամակի բովանդակութիւնը: Գրութիւնը ներկայացնում եմ առանց որեւէ միջամտութեան, եղածի պէս:

**Երեւան, 4 Հոկտոմբերի, 1965թ.**

**Արշակ**

Ես կարող էի չպատասխանել քո գրութեանը (Օգոստ. 1965թ.), որը պարզապէս կեղծիք է, բայց, այնուամենայնիւ, որոշեցի մի քանի բառ ասել, որպէսզի չկարծես թէ սարից-ձորից բերած կցկտուր խօսքերով համոզել ես ինձ: Ես նորից եմ կրկնում՝ «Իմ ժողովրդի դաւաճանողին» եւ ընկեր չեմ լինի», եւ այդ պատճառով էլ այդ խօսքերը ուրիշ շատերի ներկայութեամբ քո երեսին արտասանելիս՝ մերժել եմ սեղմել ձեռքդ:

Շատ հետաքրքիր է որ, եթէ ես, եւ կամ էլ մէկ ուրիշը ասում է «Իմ ժողովուրդը», դու այդ բառով հասկանում ես Դաշնակցութիւնը (ըստ քո նամակի 3-րդ եւ

4-րդ տողերի), եւ այսպէս թէ այնպէս, քեզ իրաւունք ես տալիս լիաթոք հայհոյելու Հայ ժողովրդին: Թէ ինչպէ՞ս,- ես քեզ կը յիշեցնեմ: Կը յիշեցնեմ թէ ինչը ինչպէս եղաւ:

Դեռ Եղեռնի 50-ամեակի՝ Ապրիլի 24-ի նախօրեակին, դու յաճախակի գալիս էիր մեր եւ հարեւանների տները, եւ չգիտեմ ո՞ր տեղից ստացած թելադրանքի համաձայն, անընդհատ պատուով ըրում էիր, որ Ապրիլի 24-ի օրը ոչ ոք տնից դուրս չգայ, թող իր տանը նստի եւ իր մեռելներին սպայ: Անընդհատ այդ էիր կրկնում: Եւ սակայն, քեզ ու քեզ նմաններին չլսեց մեր ժողովուրդը եւ այդ օրը, աւելի քան 300 հազար մարդ (հայ ժողովուրդը) դուրս եկաւ ցոյցի՝ մէկ անգամ եւս քաղաքակիրթ աշ-



խարհի առջեւ ապացուցելու, որ Հայ ժողովուրդը երբեք չի մոռանալու թուրքերի կատարած անլուր բարբարոսութիւնը՝ նրանց ձեռքով կատարուած առաջին Յեղասպանութիւնը աշխարհում:

Բայց չաջորդ օրը, Ապրիլի 25-ին Երեւանում եղան ձերբակալութիւններ եւ այդ նոյն օրը, երեկոյեան ժամը 11-ին, երբ ես իմ տիկնոջ հետ տուն էի վերադառնում, ակտիւսում պատահեցի քեզ: Հարբած էիր, քթիդ ծայրը չէիր տեսնում, ծամածուռած դէմքիդ վրայ շնական ծիծաղով, մօտեցար մեզ եւ բարձր ձայնով ի լուր անձանթ բազմութեան՝ ասացիր.

- Հը~, տեսա՞ր հիմա~, հոդե՞ր, հողեր էին ասում, տեսա՞ր ինչպէ՞ս են հաւաքում ու բոլորին ծակը կոխում, դրանց բոլորին «...», բոլորին պիտի-, այստեղ արդէն անբարոյ, լկտի հրէշաւոր հայհոյանքը լսեց ակտիւսով քարացած ժողովուրդը:

Կարող էի որեւէ ձեռով պատասխան տալ այդտեղ: Ի հարկէ՛՛ ո՛չ, որովհետեւ Հայ ժողովրդի պաշտպանութեան համար իմ կողմից արտասանուելիք որեւէ խօսք՝ քո կողմից, անձանթ բազմութեան առջեւ պիտի որակուէր, պաշտպանութիւն Դաշնակցութեանը (ինչպէս ցոյց է տալիս քո ներկայ գրութիւնը: Եւ դու մնացիր անպատասխան, «յողթական»:

Հիմա յիշեցի՞ր քո լիաթոք հայհոյանքը մեր պաշտելի ժողովրդի հասցէին, խուժանի, թուրքավարի հայհոյանքը, այն էլ, նրա ամէնանուիրական մէկ օրում: Դու քեզ շատ ազատ էիր զգում, որովհետեւ համարում էիր, որ իշխանութիւնները քեզ հետ համա-ձայն կլինէին (բայց, քաւ լիցի, ընկ. Զարոբեանը համաձայն չէր լինի): Եւ դրա համար էլ մի քանի օր յետոյ, երբ դու նորից երեւացիր մեր կողմերում, ուզում էիր ողջունել ինձ՝ ես քեզ մերժեցի:

Ինչ խօսք, որ դու քո պարտականութեան վրայ էիր, քանի որ այդ շրջանում իշխանութիւնները հաշտ աչքով չէին նայում Հայ ժողովրդի ազգային զգացումների ազատ արտայայտութեանը: Դու շատ լաւ էիր կատարում քո պարտականութիւնը Ապրիլի 24-ին: Դրանից յետէ էլ դու շարունակում էիր կատարել քո սեւ գործը: Ժողովրդի մէջ տարածելով, թէ այդ ցոյցը «խուլիզանական» տարրերի, ինչպէս նաեւ Դաշնակների եւ Դաշնակցականամիտ տարրերի գործն էր:

Իսկապէս որ դու քո տարերքի մէջ էիր, որովհետեւ, իրոք որ այդ շրջանում իշխանութիւնները փոր-

ձում էին նման գնահատական տալ Եղեռնի 50-ամեակին նուիրուած համաժողովրդական այդ շարժումը՝ քեզ նմանների օգնութեամբ:

Ես այսօր կարող եմ անվախ խօսել այդ մասին, որովհետեւ իշխանութիւնները մի քանի ամիս շարունակ ժողովրդի այդ գիտակցական շարժումը վարկաբեկելուց յետոյ տեսան, որ սխալ բան էր այդ եւ անցան նրա պաշտպանութեան կողմը: Իսկ դու՝ հիմա դարձեալ քո տարերքի մէջ ես. Պաշտպանում են՝ դու էլ ես պաշտպանում: Այդպէս չէ՞: Եւ այժմ Հայ ժողովրդի հասցէին լիաթոք հայհոյելուց չորս ամիս յետոյ, ինձ գրում ես հայրենասէրի տոնով:

«Յետագայ օրերում, երեւոյթներին ու եղելութիւններին աւելի մօտիկից իրազեկ դառնալուց յետոյ, ես հանգել եմ այն եզրակացութեանը, որ 24-ի ելոյթը, որպէս ժողովրդական կամքի արտայայտութիւն եւ, միաժամանակ, որպէս արձագանգը համահայկական մասշտաբով (ծաւալ) մի նշանակալի ՏԱՐԵԴԱՐՁԻ (Տարելից,-այդքան է մարդու գրագիտութիւնը,- ի՞նչ կարող ես անել,- Հեն. Ա.), անխուսափելի էր, եւ պէտք է, որ տեղի ունենար»:

Քեզ հակասելով ես գրում այդ տողերը, որովհետեւ Ապրիլի 24-ի օրերին պայքարում էիր նրա դէմ, եւ միայն չորս ամիս յետոյ ես ընդունում նրա արդարացի լինելը: Ինչո՞ւ,- որովհետեւ հիմա այդպէս է նոր թելադրանքը: Դու փորձում ես ցոյց տալ թէ այլ ձեռով է առաջացել քո մէջ բեկումը:

- Այդ օրերին,- շարունակում ես,- այսինքն Ապրիլի 24-ի օրերին, առիթ եմ ունեցել մասնակցելու ժողովներին, մտքերի փոխանակութեան: Ինձ յայտնի են դարձել 8-10 կազմակերպութիւններ՝ այդ առիթ կայացրած որոշումներն ու բանաձեւերը (Գրողների Միութիւն, Համալսարան եւն,) եւ ես կանգնել եմ վերոյիշեալ տեսակէտի վրայ:

Ոչ բարեկամ, այդպէս չէ: Արի ճիշդը խօսենք: Դու չես կանգնել «վերոյիշեալ տեսակէտի վրայ», այլ մեր իշխանութեան ողջամիտ ներկայացուցիչները, իսկ քեզ հարկաւոր է եղել այս անգամ էլ դրանից օգտուել, որպէսզի ես եւ ուրիշներ համոզուենք, որ դու մեր ժողովրդի շահերին դաւաճանող չես, այլ ընդունում ես, որ Եղեռնի 50-ամեակը «ժողովրդական կամքի արտայայտութիւն» էր:

Իրականութիւնն այն է, որ դու գիտես շարժուել միայն թելադրանքներով՝ մի օր այսպէս, մի օր այնպէս:

Յ. Ս. Անասեան

### Մէկ Օր «Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթօրեայ Դպրոցում



2022 թ.-ի Ապրիլի 9-ին ԱՄՆ Արեւմտեան թեմի առաջնորդանիստ «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ վարժարանում հերթական անակնկալն էր կազմակերպուել: Դպրոց էր այցելել հայրենիքից հիւրաբար մեր գաղութում գտնուող, ռազմահայրենասիրական երգերի անգլոգական կատարող, ազատամարտիկ Մկրտիչ (Մակիչ) Մկրտչեանը: Կրթօժախն իր ազգապահպանութեան ուխտին հաւատարիմ՝ դպրոցական օրը վերածեց իւրօրինակ դասի, որի ընթացքում աշակերտները մտովի տեղափոխուեցին հայրենիք: Մկրտիչ Մկրտչեանն աշակերտներին պատմեց Արցախեան հերոսամարտի փառապանծ դրուագների մասին: Դպրոցականներին յատկապէս հիացրեց ՀՀ ազգային հերոս թափուկ Կրպեյեանի մասին վկայութիւնները՝ համեմուած գեղեցիկ երգերով: Վերջում Արեւմտեան թեմի շաբաթօրեայ վարժարանների հոգեւոր տեսչութեան եւ գիտակրթական յանձնախմբի անունից հիւրին շնորհակալագիր յանձնեց դպրոցի տնօ-

րէն, բարեչնորհ Յովհաննէս սարկաւազ Գումրուչեանը:  
Ուսուցիչների հետ հանդիպմանը, որին ներկայ էր նաեւ յայտնի մանկավարժ, դոկտ. Էլլի Անդրէասեանը, օրուայ հիւրը ներկայացրեց իր տիկնոջ՝ Արուսեակ Սիմոնեանի «Ամպի չափ» վերտառութեամբ մանկական բանաստեղծութիւնների ժողովածուն: Այն աչքի էր ընկնում նրանով, որ իւրաքանչիւր ստեղծագործութիւն, նոյն էջի վրայ ունէր իր արեւմտահայերէն եւ արեւելահայերէն տարբերակը: Նմանօրինակ գործերը գալիս են լրացնելու այն բացը, որ այսօր գոյութիւն ունի սփիւռքում, այն է մեր մայրենի լեզուի երկու ճիւղերի համադրութեամբ՝ պահպանել ու տարածել ոսկեղենիկ հայոց լեզուն: Գրքի առանձնաչափութիւններից մէկն էլ իր հետաքրքրական պատկերագրողութեանն էին:  
Օրն աւարտուեց առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանի հետ հանդիպմամբ եւ Սրբազան հոր օրհնութեամբ:

### «Մարալ» Համոյթի Փայլուն Երեկոյթը Եսայեան Սանուց Միութեան Հիմնադրութեան 75-Ամեակին Առթիւ



Երկու տարուան սպասումէ ետք վերջապէս պոլսահայ գաղութէն ներս սկսան վերակազմակերպուիլ հրապարակային ձեռնարկները, որոնք ընդմիջուած էին քորոնա համավարակի պատճառով: Այս ծիրէն ներս, Կիրակի Ապրիլի 10-ին, 2022, Պոլսոյ անուանի «Մարալ» համոյթը, փայլուն համերգով մը հանդէս եկաւ «Փուլիա» մշակութային համալիրի սրահին մէջ: Էսայեան սանուց միութեան հիմնադրութեան 75-ամեակին նուիրուած յօբելինական ձեռնարկ մըն էր, որ արժանացաւ արուեստասէր հասարակութեան անմիջական հետաքրքրութեան եւ գնահատանքին:  
Գեղարուեստական ղեկավար Կարպիս Չափքանի հսկողութեան ներքեւ սոյն պարի համոյթը գերա-

զանց յաջողութեամբ գործադրեց իր յայտագիրը, արժանանալով որոտընդոստ ծափահարութիւններու: Համերգը բացառիկ երեսակ մըն ալ ունէր, քանի որ իր մասնակցութիւնը բերած էր նաեւ համակրելի երգչուհի Մարալ Այվազը: Ան իր քաղցր ձայնով, խոր տպաւորութիւն ձգեց հանդիսատեսներուն վրայ: Ուշագրաւ էին նաեւ համոյթի դէմքերէն Սարեմ Շէշէթեանի մենայարերը:  
Այսպիսով՝ համավարակի սահմանափակումներով պայմանաւորուած երկար ընդհատումէ վերջ, «Մարալ» գեղարուեստասէրերուն եւ մեր ընկերա-մշակութային կեանքէն ներս, նոր աշխուժութեան մը խապրիկը բերաւ:  
«Ժամանակ»

### Նորայայտ Կազմակերպութիւնը Պոլսոյ Մէջ «Բարեկամ» Անունով

Պոլսահայ մամուլէն կ'իմանանք թէ անցեալ շաբաթավերջին Ֆէրիգիւղի «Շիրինօղլու» սրահին մէջ, տեղի ունեցած է յատկանշական հաւաքոյթ մը: Արդարեւ, վերջին շրջանին համայնքային կեանքէն ներս բեղուն գործունէութիւն կը ծաւալէ նորաստեղծ «Բարեկամ» խումբը, որ հետամուտ է ընկերային զօրակցութեան: Սոյն ձեռնարկը՝ առիթ հանդիսացած է, համայնքային շրջանակներուն, աւելի մօտէն ծանօթացնելու այս խումբի գործունէութիւնն ու նպատակները: «Բարեկամ» ներու հաւաքոյթին նախագահած է Թուրքիոյ հայոց պատրիարք Ամեն. Տ. Սահակ Արք. Մաշալեան:  
Ձեռնարկին ողջոյնի խօսքերով հանդէս եկած են Գարին Լըրքճը եւ Հերա Միմար, որոնք բացատ-

րութիւններ տուած են «Բարեկամ» խումբի որդեգրած նպատակներուն շուրջ: Ան իր այժմու գործունէութեան համար կարգախօս ընտրած է այն մօտեցումը թէ իւրաքանչիւր երախայ իրաւունք ունի լաւ կրթութիւն ստանալու:  
Հաւաքոյթի ընթացքին Թուրքիոյ Հայոց Պատրիարքն ալ դրուատանքով արտայայտուեցաւ «Բարեկամ» ներու գործունէութեան մասին, միաժամանակ ցոյց տալով իր աջակցութիւնն ու գնահատանքը: Ան յորդորեց նաեւ որ աշխատանքները շարունակուին մեկնարկի ոգիով:  
Աւարտին՝ ներկաները շրջապատեցին այս խումբի կամաւորները, ջերմօրէն իրենց յղելով յաջողութեանն և յարատեւութեան մաղթանքներ:

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**

From Armeno-Turkish to Armenian and English languages.  
Bring your family's history back to life!  
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes  
Website: [norayr.daduryan.com](http://norayr.daduryan.com)  
Email: [norayrdaduryan@gmail.com](mailto:norayrdaduryan@gmail.com)

**ՑԱԲԱԿՑԱԿԱՆ**

ՍԷՐԱ ԱՅՆԹԵՊԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաչինեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ծնողքին՝ Տէր եւ Տիկ. Ժանօ եւ ձենի Այնթէպլեաններուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:  
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

**ՑԱԲԱԿՑԱԿԱՆ**

ՍԻԼՎԱ ԽԱՆԼԵԱՆԻ եւ ՄԱՐԻ ՏԱԼՏՄԵԱՆԻ մահուան տխուր առիթներով Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաչինեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:  
Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

Name: -----  
Address: -----  
City: ----- State: ----- Zip Code: -----  
Country: -----  
Tel: -----  
Email: -----

Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
Massis2@earthlink.net (626) 797-7680

### «Մանչեսթեր Սիթի» Ու «Լիվերպոլ» Յաղթողին Չպարգեցին



Անգլիոյի առաջնութեան 32-րդ հանգրուանին ախոյեան եւ առաջատար «Մանչեսթեր Սիթի» ընդունեց «Լիվերպոլ»-ը: Խաղը սաւարտեցաւ հաւասար արդիւնքով՝ 2:2:

5-րդ վայրկեանին «Մանչեսթեր Սիթի» առաջ մղեց պեւլիզացի կիսապաշտպան Կեւին տէ Փրուչչին: 13-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց «Լիվերպոլ»-ը փորթուկալացի յարձակող Տիոգո ժոտան: 36-րդ վայրկեանին մանչեսթերեան խումբի երկրորդ կողմը նշանակեց պրագիլացի յարձակող Գաբրիէլ Հեզուսը: 46-րդ վայրկեանին երկրորդ պատասխան կողմը նշանակեց սենեկալցի յարձակող Սադիո Մանէն:

63-րդ վայրկեանին «Մանչեսթեր Սիթի» անգլիացի յարձակող Ռահիմ Ստերլինգը գրաւեց հիւրերու բերդը, սակայն VAR-ը ցոյց տուաւ խաղէն դուրս վիճակ:

31 խաղէ յետոյ «Մանչեսթեր Սիթի» 74 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, «Լիվերպոլ»-ը ետ է 1 կէտ:

### «Պայրընին» Յաղթանակ Ապահովեց Լեւանդովսկիի Փենալթիով Կողմ

Գերմանիոյի առաջնութեան 29-րդ հանգրուանին ախոյեան «Պայրըն Միւնխիլը» իր դաշտին վրայ ընդունեց «Աուգսբուրգ»-ը եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Յաղթական կողմը 82-րդ վայրկեանին 11 մեթրանոցէն նշանակեց լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին:

«Պայրըն» 69 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող Տորթմունդի «Պորոսիա»-ն:

### «Միլան» Ոչ Ոքի Խաղաց Եւ Առաջատարն Է

Իտալիոյ առաջնութեան 32-րդ հանգրուանին առաջատար «Միլանը» հիւրընկալուեցաւ «Թորինոյէն» եւ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով: Խումբերը կողմնակի չկարողացան:

«Միլան» 68 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ կը գերազանցէ երկրորդ տեղը ընթացող ախոյեան «Ինթերին», որ 1 հանդիպում պակաս կատարած է:

### «Ռոմայի» Յաղթանակը, Միսթարեանի Կողային Փոխանցումը




Իտալիոյ առաջնութեան 32-րդ հանգրուանին «Ռոման» ընդունեց յետնապահ «Սալերնիտանային»: Փորթուկալացի ժոզէ Մուրիլիոյի գլխաւորած խումբը յաղթանակ արձանագրեց 2:1 արդիւնքով:

Առաջինը յաջողութեան հասան հիւրերը 22-րդ վայրկեանին, սակայն 81-րդ եւ 85-րդ վայրկեաններուն հոռոմէական խումբէն աչքի իջնական սպանացի յարձակող Կառլոս Սալոլը եւ անգլիացի պաշտպան Կրիս Սմոլինգը: Սալոլին կողային փոխանցումը կատարեց Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Միսթարեանը:

«Ռոման» 57 կէտով այժմ կը գրաւէ 5-րդն տեղը:

### Ախոյեաններու Լիկայի Քառորդ Եզրափակիչին «Ռեալ» Յաղթեց «Չելսիին»

Ֆուտպոլի եւրոպական Ախոյեաններու լիկայի քառորդ եզրափակիչի առաջին խաղին Սպանիոյ առաջնութեան առաջատար «Ռեալը» Լոնտոնի մէջ մրցեցաւ Ախոյեաններու Լիկայի գաւաթակրի տիտղոսը պաշտպանող անգլիական «Չելսիի» հետ եւ յաղթանակ արձանագրեց 3:1 արդիւնքով:



Արքայական ակումբէն երեք կողմ հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Քարիմ Անեզեման, որ աչքի ինկաւ 21-րդ, 24-րդ եւ 46-րդ վայրկեաններուն: 40-րդ վայրկեանին արդիւնքը կրճատեց գերմանացի կիսապաշտպան Կայ Հաւերցը:

Օրուայ միւս խաղին սպանական «Վիլլառեալը» ընդունեց Գերմանիոյ ախոյեան Միւնխիլի «Պայրընին» եւ առաւելութեան հասաւ 1:0 արդիւնքով: 8-րդ վայրկեանին հիւրերու բերդը գրաւեց հոլանտացի յարձակող Առնօ Կրունեկեր:

### ՊՍՏ-ի Յաղթանակը, Նեյմարի Եւ Սփապէի Երեքական Կողերուն Շնորհիւ

Ֆրանսայի առաջնութեան 31-րդ հանգրուանին ՊՍՏ-ն հիւրընկալեց «Կլերմոնի» եւ յաղթեց 6:1 արդիւնքով:

Փարիզեան խումբէն երեքական կողմ նշանակեցին պրագիլացի յարձակող Նեյմարն ու ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն: Արժեքներու յարձակող Լիոնել Մեսին երեք կողային փոխանցում կատարեց:

ՊՍՏ-ն 71 կէտով առաջատարն է եւ երկրորդ տեղը գտնուող «Ռենն»-ն առաջ է 15 կէտով:

### Սփապէ. Ափսոս, Որ Փոխընթացումը Նեյմարի Եւ Մեսիի Միջեւ Միայն Հիմա Յայտնուեցաւ



Ֆրանսական ՊՍՏ-ի եւ աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի յարձակող Կիլիան Մփապէն Ֆրանսայի առաջնութեան 31-րդ հանգրուանին «Կլերմոնի» նկատմամբ 6:1 հաշուով յաղթանակէն յետոյ խօսած է խումբի պրագիլացի յարձակող Նեյմարի եւ արժեքներու յարձակող Լիոնել Մեսիի հետ խաղի մասին: Մփապէն ու Նեյմարը «Կլերմոնի» բերդը նշանակած էին երեքական կողմ, Մեսին կատարած էր երեք կողային փոխանցում:

«Մենք երջանիկ ենք, ստացանք մեծ հաճոյք, մինչեւ 10-րդ ախոյեանական տիտղոսը քիչ մնացած է: Ափսոս, որ փոխընթացումը Նեյմարի եւ Մեսիի հետ միայն հիմա յայտնուեցաւ, բայց ուշացման համար կային շատ պատճառներ եւ հանգամանքներ: Այսպիսին է կեանքը: Երբեմն կը յաղթես, երբեմն կը պարտուիս, բայց պէտք է շարունակել առաջ նայել: Ունեցանք տհաճ պահեր, ցաւը դեռ չէ անցած, բայց պէտք է ըլլալ լաւատես եւ ցոյց տալ, որ մենք մեծ ակումբ ենք, մեծ խումբ եւ կը ցանկանանք տիտղոսներ նուաճել», - Մփապէի խօսքը կը մէջբերէ Goal.com-ը:

Կը սպասի, որ Մփապէն ամրան անվճար կը տեղափոխուի Մատրիտի «Ռեալ»:

### «Պարսելոնա» Եւ «Ռեալ» Յաղթական

Սպանիոյ առաջնութեան 31-րդ հանգրուանին «Պարսելոնան» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիւրեցաւ «Լեւանտէի» կողմէ եւ յաղթանակի հասաւ 3:2 արդիւնքով:

Չալիի գլխաւորած խումբին յաղթական կողմը աւելացուած ժամանակին նշանակեց հոլանտացի յարձակող Լիուկ տէ Եոնկը:

31-րդ հանգրուանին Մատրիտի «Ռեալն» ընդունեց «Խետաֆէին»: Իտալացի Գառլօ Անչելոտիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Կողերը նշանակեցին պրագիլացի կիսապաշտպան Գաբեմիրոն ու սպանացի կիսապաշտպան Լուկաս Վասկեզը:

«Ռեալ» 72 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 12 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող «Պարսելոնային» եւ երրորդ դիրքի վրայ եղող «Սեւիլային»:



2022

# Armenian Genocide

## COMMEMORATION EVENTS

**APRIL 23**

10:30 AM

**RELIGIOUS  
CEREMONY &  
PLACEMENT OF  
FLOWERS**

MONTEBELLO  
ARMENIAN  
GENOCIDE  
MONUMENT

**APRIL 24**

**TELEVISION  
& ONLINE  
SPECIAL  
PROGRAM**

**6:00 PM**  
AMGA  
HORIZON TV  
US ARMENIA

**7:00 PM**  
AABC  
ARTN

### BLOOD DRIVE

**APRIL 23 9AM-3PM**  
AGC/AGBU  
(W/ HUNTINGTON HOSPITAL)  
2495 E. MOUNTAIN ST.  
PASADENA, CA 91104



**APRIL 30 10:30AM-4:30PM**  
AGC/GAIDZ YOUTH ORG.  
(W/ THE RED CROSS)  
1060 N. ALLEN AVE.  
PASADENA, CA 91104



FOR MORE INFO GO TO  
[@ArmenianGenocideCommittee](#)

